Թ. ՏԱՐԻ 2590 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 2 ՀՈՌԻ 4385 11 ՍԵՊՏԕՄԲԵՐ 1892 2 ՐԻՊԻԼ ԷՎՎԷԼ 1340 ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Կ. Պոլիս

درعليه ده غلطه ده آره‌ولك غزه‌ته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան (դրամական առձեռն)	150
» » Վեցամսեայ » »	75
» » Եռամսեայ » »	40
Օտար երկիրներէ Տարեկան (Գրամ)	56
» » Վեցամսեայ »	28
Ընտիր թուղթի վրայ տասնաւոր տպագր. Տարեկան Օսմ. Ոսկի	2
Դաւանաւոր թղթատարի ծախքը փոխադրական	Գրուշ 50

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՍԵՊՏ. 11/23, 1892

ԸՆԿԵՐԱՑԻՆ ՆԻՒԹԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ ԻԶՄԻՐԻ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Յոռետես Նամակագրէն ետքը, լաւատես Նամակագիրն, որպէս դիւրին էր գուշակել։

Օգոստ. 26 թուով նամակ մը, որ սակայն ուշ հասած է մեր ձեռքը, կը ջանայ հաստատել թէ լրագրոյս 2568րդ թուոյն մէջ Իզմիրէ հրատարակեալ հետաքրքրաշարժ թղթակցութեան ինչ ինչ կէտերը չափազանցեալ են։ Շատ ուրախ պիտի ըլլանք եթէ իրաւունքն առաւելապէս այս երկրորդ թղթակցին վերաբերի, որ պատկանելով կամ գէթ համակրելով տեղւոյն ուսուցչական նախորդ խմբին, ամեն իրաւունք ունի հերքել կամ բացատրել ինչ որ ըսուի կամ ենթադրուի նոյն խմբին դէմ։

Լաւատես Նամակագիրը կը գրէ.

«Իզմիրի երիտասարդն իւր պատուոյն նախանձախնդիր՝ երբեք չտորմանար իւր յոյն սպասուհւոյն հետ յարաբերութիւններ կազմելու, քանի որ քաջ գիտէ հօրենական տան պատիւը պաշտպանել՝ որ իւր պատիւը կը համարուի։ Հայ երիտասարդն եթէ չամուսնանար, պատճառը յոյն աղջիկներու հետ աղջրինի միութիւններ հաստատելուն հետեւանքը չէ։

«Որովհետեւ, հայ երիտասարդը՝ միջակ դասու հօր մը զաւակն՝ երբ կը մեկնի դպրոցի սեմէն, կամ դրագրութեան պիտի կոչուի և կամ իւր հօր պիտի աշակցի առեւտրական ասպարէզին մէջ անոր յաջորդ լինելու համար։ Նախ՝ պարագաներն անոր ժամանակ չեն թողուր յոյն աղջիկ մը սիրելու, երկրորդ՝ իւր նիւթական վիճակը չի թոյլատրեր պահցու մ'ունենալ։

«Մեր մէջ մեծամասնութիւն կը կազմէ միջակ դասակարգի երիտասարդութիւնն, որ քաջ գիտէ թէ ինք միայն իւր պատուոյն նախանձախնդրութեամբ լաւ և ուղիղ կենցաղ մ'ունենալով կարող կը լինի պահել ու պահպանել իւր լաւ անունն՝ ստանալով պարկեշտ համբաւ մը։

«Եթէ հայ երիտասարդը չամուսնանար, մի քանի պատճառներ ունի. նախ՝ որ ընտանեկան արգելքներու կը բախի և կը ստիպուի մասնաւոր տուն կազմելու դադափարը մի կողմ թողուլ։ Երկրորդ՝ իւր ծնողքն և իւր կրտսերներն հոգալու և խնամելու ստիպուելով, ամուսնութենէ կը հրաժարի. երրորդ՝ հայ երիտասարդն հպարտ է և մինչեւ որ ինք լաւ կացութեամբ մը չկարողանայ ինքնագլուխ լինել, չուզեր ամուսնանալ. որովհետեւ եթէ իւր ամուսնանալն հաւասար աղջիկ մ'ուզէ առնուլ, չպիտի կարողանայ վայելչապէս ապրիլ, ըստ նոր պահանջմանց։ Միւս կողմէ կը խորշի օժիտով իրմէ բարձր աղջկան մը մօտենալ, քանի որ միշտ աչքի առջեւ ունի գայթակղելի օրինակներ՝ որ ստէպ կը լսուին ի հեռուստ և կը տեսնուին ի մօտուստ։

«Կարող ենք ցոյց տալ յիսունէ աւելի հայ երիտասարդներ՝ որք իրենց լաւ ու պարկեշտ, ազնիւ ու հաւատարիրքով ամենուն համակրանքն ուվըստահութիւնը շահած են և որք լուիկ մեջլիկ իրենց զբաղումներովը կ'ըմբռնեն կենաց պարտիքն և պարտուց զգացումը։

«Թէև հաղուադէպ՝ բայց եթէ պէտք լինի փնտռել ապօրէն կենակցութիւններ և յարաբերութիւններ հայ երիտասարդաց մէջ, պէտք է մեր ակնարկը դարձնել հարուստ դասակարգին վրայ, որ օտարոտի վատ կրթութեան և տեսակ մը եւրոպական յոռի վարուց և բարուց հակամէտ՝ հեշտութեան, զեղխութեան և ի վերջէ ֆիզիքական փճացման մէջ կը կարծեն գտնել կենաց վայելքն և երջանկութիւնն։

«Իսկ գալով եկեղեցւոյ մէջ հայ երիտասարդին անվայել ընթացքին, կարող ենք հաստատել եթէ տեղւոյս ոչ է դասակարգի նկատմամբ զրպարտութիւն մ'է այդ։

«Նամակագիրը կ'երևի թէ օտարներու եկեղեցիներն ստէպ յաճախելով՝ անդ պատահած դէպքերու վրայ կը հիմնէ իւր պատմած առասպելն։ Մինչդեռ ոչ է ամենաչնչին միջադէպ մ'իսկ չէ պատահած Հայոց եկեղեցւոյն մէջ. ընդհակառակն՝ Իզմիրի հայ երիտասարդի երկիւղած և պատկառոտ ընթացքը կը մաղթենք որ ամեն քաջաբաց հայ երիտասարդութիւնն ունենար։

«Բայց և այնպէս կ'ընդունինք երբ կ'ըսէ թէ հայ երիտասարդն եկեղեցի չերթար։ Բայց փնտռենք այն պատճառներն որոնք հայ երիտասարդն հեռու կը պահեն իւր տաճարէն։ Այդ տաճարին սրբութիւնը պահպանելու, բարեպաշտութեան, ջերմեռանդութեան, կրօնասիրութեան կենդանի օրինակն, անձնուէր սպասաւորն, Աստուծոյ տան ծառան լինելու սահմանեալ անձերէն, դաս մը քահանաներէն՝ իւր զգացած խորշանքն են ահա գրգիռ, որ կ'արգելուն դայն իւր եկեղեցին երթալու։

«Այո՛, այսօր քահանայք ոմանք Իզմիրի երիտասարդաց չէ թէ համակրութիւնն այլ յարգն իսկ չեն վայելեր։ Երբ քահանայ մը Աւետարանն իսկ ուղիղ և որոշ չէ կարող կարդալ, երբ իւր Եկեղեցւոյ խորհուրդները իսկ չգիտեր, երբ եկեղեցւոյ մէջ իսկ ժողովուրդն ականատես կը լինի իւր անշարժար ընթացքին, երբ բարոյապէս ու ֆիզիքապէս ոչ այնքան մաքուր քահանայ մը կը համարձակի Ս. խորանին մօտենալ և մինչեւ իսկ պատարագելը երբ ինք՝ որ ուրիշներն ապաշխարութեան պիտի յորդորէ և մերթ ծոմապահութեան՝ հաղորդուելու համար, իւր սոսմոքը պարարելէ վերջ Ս. Սեղանին վրայ կ'երթայ, երբ Ս. Հաղորդութեան միջոցին իսկ, ծերին, երիտասարդին, մանկիկին առջեւ անյարմար լեզու մը կը գործածէ, երբ սովորական հարկի մ'առջեւ կը ձանձրանայ տեղէն իսկ շարժելու և ոչ է աղբատ անհատի մը թաղումն ուրիշի վրայ կը թողու, երբ եկեղեցւոյն մէջ, միայն իւր խոպոպն անդադար պտտցնելու մէջ իւր ճարպիկութիւնը ցոյց կուտայ, երբ տօնախմբութեանց միջոցին եկեղեցիէն փախուստ կուտայ, երբ ուսեալ, բանիբուն և քիչ շատ խոհեմ քահանայն ձեռնադրութեան խորհրդոյն մէջ ընդունելութեան դէմ կը մաքառի, և քահանայութիւնն իբրև լուկ հացի և ապրուստի միջոց կը նկատէ, կը հարցնենք՝ ի՞նչպէս հայ երիտասարդն որ քիչ շատ ուսեալ՝ մտածելու, դատելու վիճակին մէջ կը գտնուի, չցաւի որ իւր եկեղեցին այսպէս ըլլայ։

«Իսկ երբ տեղւոյդ թերթերէն մին երիտասարդութեան կրօնական անտարբերութիւնն մեր եկեղեցւոյ և դպրոցներուն նախորդ վարիչներուն պատասխանատուութեան կը վերագրէ, չենք կարող մեր ծիծաղը զսպել։

«Նախորդ վարչական մարմնոյ եւ դպրոցական տնօրէնութեանց մէջ կը գտնուէին միշտ ուսեալ, բանիբուն, խոհեմ՝, դիտուն, ներհուն անձնաւորութիւններ, որոնք իրենց ներկայութեամբ պատկառանք ազդած են աշակերտաց և իրենց օրինակելի վարուց և բարուց բարձրութեամբ սքանչացում պատճառած են։ Իսկ արդի ազգ. վարչական մարմնոյ մէջ կը գտնուի մէկէ աւելի անդամ որ երբ Աբէ-Եփիդ մէջ պանդուխտ պահցուական կենակցութեամբ ժամանակ անցունողներ, չենք կարծեր որ այս մեծայարգ անդամը կարող ըլլայ այնպիսեաց վրայ առաջին քարն ինք նետել։ Այս տեսակ կենակցութիւնք կրնան միթէ լաւ օրինակ ըլլալ աշակերտաց և աշակերտուհեաց։»

* * *

Ինչպէս կ'երևի, լաւատես Նամակագիրն, ինչ ինչ կէտեր հերքելով կամ պարզելով, որոշապէս կամ լռելեայն կ'ընդունի յոռետես Նամակագրին դրածներուն մեծագոյն մասն։ Իզմիրի Հայոց մէկ մասին օտարասիրութեան, աչխարհաքաղաքացի ուղղութեան, հայրենի աւանդութիւններէ պաղելուն, նոյն իսկ հայրենի անուններէ հրաժարելուն, յունարէնն հայերէնէ և օտար կրթութիւնն ազգային կրթութենէ նախադաս համարելուն և իրենց դրիւք ժողովրդեան բարի օրինակ ըլլալ կոչուած կարգ մը ազգայնոց արատաւոր կենցաղավարութեան վրայ դրուածներուն բան մը չըսեր մեր յարգելի՝ հոն էր որ Սանտրիյեոնի հետ ունեցած էր անուշ խօսակցութիւններ, որք միշտ ազնիւ բան մը կը թողէին իր սրտին մէջ։

Իր սանուհիներուն մէջեղ նստած, Մառի-Մատրլէն կը պատմէր պարիկներու այն պատմութիւններէ մին որք ուրախութիւն են տալոյց։ Անպատճառ բանով մը դրգռեցուցելու էր զանոնք, զուարճացնելու էր, թող չտալու համար որ վազելով տարնան քրտնին։ Եւ տակաւին անոնց այտերը կրակի պէս տաք էին և ճակատնին քրտնաթոր։

Վարժուհին աւարտած ըլլալով պատմութիւնն իր դիւցազնուհւոյն յաղթանակովը, Բօլին գոչեց.

—Շատ ծարաւ եմ։

—Ես ալ շատ ծարաւ եմ, ըսաւ Լիւսիէն. երթանք կաթ խմենք տիկին Լանտրիի տունը։

—Շատ աղէկ, սիրելիներս, ագարակ երթանք, ըսաւ Մառի-Մատրլէն ոտքի ելնելով։

Բացաւ վանդակերպ դուռն, որ դասատանը կը վիպէր կողմնակի, և երեքն ի մասին, ագարակատանին պարտէզն անցնելով, անոր տունը մտան։

Շարլոթ Լանտրի ախոռներուն մէջ զբաղած էր. Սանտրիյեոն հրամցուց պզտիկ աղջիկներուն երկու գաւաթ տակաւին գաղջ կաթ։

Երբ, վայրկեան մը ետքը, Բօլին քաշեց վարժուհին՝ չրջագիտուն՝ ինչ որ ըսել կ'ուզէր. «Երթանք», Սանտրիյեոն մօտեցաւ Մառի-Մատրլէնին, աղաչանք մը ակնարկեն մէջ։

—Է՛հ ուրեմն, ըսէ՛, Սանտրիյեոն, ըսաւ մանկամարդ աղջիկը։

—Եթէ ուզէիք, քիչ մը ձեզ հետ կուգայի։

—Բայց անշուշտ կ'ուզեմ, եթէ զբաղած չէք և տիկին Լանտրի թոյլ տայ։

—Սանտրիյեոն, կրնաս ընկերանալ Մառի-Մատրլէնին, ըսաւ ագարակապանուհին որ ներս մտած էր. բոլոր օրն աշխատեցար, և դուն գիտես որ ընաւ չեմ մերժեր քեզ անհրաժեշտ եղող հանգիստ մը։

—Շնորհակալ եմ, ըսաւ Սանտրիյեոն գլխի շարժումով մը որ իր գոհունակութիւնը կարտայայտեր։

Եւ ուրախ զուարթ, ինչ որ քիչ անգամ կ'ըլլայ, հետեւեցաւ Մառի-Մատրլէնին և պզտիկ աղջիկներուն։ Մինչեւ դարաստանին ծառուղւոյն մէջտեղն անխօս մնաց՝ խորհրդածելու կերպարանք ունենալով։

—Բա՞ն մը ունիք ինձ ըսելու, հարցուց վարժուհին։

—Այո։

—Ըսէք նայիմ, բարեկամուհիս, մտիկ կ'ընեմ։

—Նախ, կ'ուզէի... կ'ուզէի ձեզ համբուրել։

Մառի-Մատրլէն ճակատն անոր կարկառեց։

—Ա՛հ, զուշեց, միշտ բարեկամ էք ինձ։

—Բայց աղէկ գիտէք որ կը սիրեմ զձեզ, պատասխանեց մանկամարդ աղջիկը, ինքն ալ զայն համբուրելով, և իմ գորովս ձեզ համար՝ կը հաւասարի ձեր իմ վրայ ունեցած գորովին։

—Օ՛հ, այո, այնպէս չէ՞։ Որովհետեւ, երբոյզ։ Հոն էր որ Սանտրիյեոնի հետ ունեցած էր անուշ խօսակցութիւններ, որք միշտ ազնիւ բան մը կը թողէին իր սրտին մէջ։

Իր սանուհիներուն մէջեղ նստած, Մառի-Մատրլէն կը պատմէր պարիկներու այն պատմութիւններէ մին որք ուրախութիւն են տալոյց։ Անպատճառ բանով մը դրգռեցուցելու էր զանոնք, զուարճացնելու էր, թող չտալու համար որ վազելով տարնան քրտնին։ Եւ տակաւին անոնց այտերը կրակի պէս տաք էին և ճակատնին քրտնաթոր։

Վարժուհին աւարտած ըլլալով պատմութիւնն իր դիւցազնուհւոյն յաղթանակովը, Բօլին գոչեց.

—Շատ ծարաւ եմ։

—Ես ալ շատ ծարաւ եմ, ըսաւ Լիւսիէն. երթանք կաթ խմենք տիկին Լանտրիի տունը։

—Շատ աղէկ, սիրելիներս, ագարակ երթանք, ըսաւ Մառի-Մատրլէն ոտքի ելնելով։

Բացաւ վանդակերպ դուռն, որ դասատանը կը վիպէր կողմնակի, և երեքն ի մասին, ագարակատանին պարտէզն անցնելով, անոր տունը մտան։

Շարլոթ Լանտրի ախոռներուն մէջ զբաղած էր. Սանտրիյեոն հրամցուց պզտիկ աղջիկներուն երկու գաւաթ տակաւին գաղջ կաթ։

Երբ, վայրկեան մը ետքը, Բօլին քաշեց վարժուհին՝ չրջագիտուն՝ ինչ որ ըսել կ'ուզէր. «Երթանք», Սանտրիյեոն մօտեցաւ Մառի-Մատրլէնին, աղաչանք մը ակնարկեն մէջ։

—Է՛հ ուրեմն, ըսէ՛, Սանտրիյեոն, ըսաւ մանկամարդ աղջիկը։

—Եթէ ուզէիք, քիչ մը ձեզ հետ կուգայի։

—Բայց անշուշտ կ'ուզեմ, եթէ զբաղած չէք և տիկին Լանտրի թոյլ տայ։

—Սանտրիյեոն, կրնաս ընկերանալ Մառի-Մատրլէնին, ըսաւ ագարակապանուհին որ ներս մտած էր. բոլոր օրն աշխատեցար, և դուն գիտես որ ընաւ չեմ մերժեր քեզ անհրաժեշտ եղող հանգիստ մը։

—Շնորհակալ եմ, ըսաւ Սանտրիյեոն գլխի շարժումով մը որ իր գոհունակութիւնը կարտայայտեր։

Եւ ուրախ զուարթ, ինչ որ քիչ անգամ կ'ըլլայ, հետեւեցաւ Մառի-Մատրլէնին և պզտիկ աղջիկներուն։ Մինչեւ դարաստանին ծառուղւոյն մէջտեղն անխօս մնաց՝ խորհրդածելու կերպարանք ունենալով։

—Բա՞ն մը ունիք ինձ ըսելու, հարցուց վարժուհին։

—Այո։

—Ըսէք նայիմ, բարեկամուհիս, մտիկ կ'ընեմ։

—Նախ, կ'ուզէի... կ'ուզէի ձեզ համբուրել։

Մառի-Մատրլէն ճակատն անոր կարկառեց։

—Ա՛հ, զուշեց, միշտ բարեկամ էք ինձ։

—Բայց աղէկ գիտէք որ կը սիրեմ զձեզ, պատասխանեց մանկամարդ աղջիկը, ինքն ալ զայն համբուրելով, և իմ գորովս ձեզ համար՝ կը հաւասարի ձեր իմ վրայ ունեցած գորովին։

—Օ՛հ, այո, այնպէս չէ՞։ Որովհետեւ,

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՈՒԶՊՈՒՐ

ՍԱՆՏՐԻՅԵՈՆ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԾԻԱԾԱՆԸ

Արդարեւ հեռացած էր Վայ-Շամպլէէն։ Բայց ի Փարիզ և չէ թէ Պրեթանեը գացած էր։ Հանդարտութեամբ, եթէ ոչ առանց անհամբերութեան, պիտի սպասէր որ իր Եոնաթան Միլսըն բարեկամն ու մեղակիցը կատարէ ստանձնած գործը։ Առ ի խոհեմութիւն հեռացած էր։ Ֆինխթերայի խորը պիտի կարծէին զինքը կամ ամենեւին չը պիտի կասկածէին որ ինք մատ ունի վարժուհիին առեւանգման մէջ։ Ապահով էր թէ Եոնաթան Միլսըն պիտի յաջողէր։ Այնքան ճարտար մարդ էր ան։

Չէր գիտեր թէ Ժօրժ Նոթիէ և Մառի-Մատրլէն զիրար կը սիրէին, և ոչ ալ անոնց ամուսնութեան որոշուած ըլլալը գիտեր։

Արդէն մէկուն չէին խօսեր այս ամուսնութեան վրայ։ Որոշուած էր որ գաղտնի պահուի մինչ ցնոր անորինութիւն։ Դպրեւանին ծառայներն իսկ բան մը չէին գիտեր, բանէ մը չէին կասկածեր։

Մինակ Սանտրիյեոն գիտակ էր խնդրոյն։ Բայց Մառի-Մատրլէնը չէր որ պրոտեղման մը վայրկենին յայտնած էր նմա այդ գործն, այլ դիպուածով, առանց ուզելու և շատ անսեղաբար իմացած էր Սանտրիյեոն խօսակցութեան կտոր մը ընդ մէջ երիտասարդ ճարտարագէտին և վարժուհիին, որք կը խօսէին իրենց ամուսնութեան և ապագայի գեղեցիկ ծրագիրներուն վրայ։

Բայց Սանտրիյեոն յոյժ գաղտնապահ էր, լսածը երբէք չէր յայտներ ոչ իսկ տիկին Լանտրիին, որ շատ հետաքրքիր էր և կը սիրէր ան ամ խօսեցունել տալ, թէեւ ոչ չարախօս էր ոչ ալ թուլբերան։

Օր մը, միւօրէին եւոք, վարժուհին և իր սանուհիները գացած նստած էին քարէ նստարաններէ միոյն վրայ դաբաստանին այն ծառուղւոյն, որ դղեակէն ագարակ կ'երկարի։ Օդը տաք էր, և այդ ժամուն, ջերմութիւնն հեղձուցիչ էր։ Փոթորկի նշաններ կային։ Իրենց դասէն եաքը, պզտիկ աղջիկները ընագրաբար ուղղուած էին դէպ ագարակին ծառուղին ուր գիտէին թէ քիչ մը զովութիւն պիտի գտնէին մեծ և թանձր հովանիներուն տակ։

Այս ծառուղին ուր արեւը ընաւ չէր թափանցեր, ամենէն սիրած ճամբայն էր Մառի-Մատրլէնին։ Հոն, ընդարձակ կանանչ կամարի մը տակն էր որ կը սիրէր երգել։ Հոն էր որ Սանտրիյեոնի հետ ունեցած էր անուշ խօսակցութիւններ, որք միշտ ազնիւ բան մը կը թողէին իր սրտին մէջ։

Իր սանուհիներուն մէջեղ նստած, Մառի-Մատրլէն կը պատմէր պարիկներու այն պատմութիւններէ մին որք ուրախութիւն են տալոյց։ Անպատճառ բանով մը դրգռեցուցելու էր զանոնք, զուարճացնելու էր, թող չտալու համար որ վազելով տարնան քրտնին։ Եւ տակաւին անոնց այտերը կրակի պէս տաք էին և ճակատնին քրտնաթոր։

Վարժուհին աւարտած ըլլալով պատմութիւնն իր դիւցազնուհւոյն յաղթանակովը, Բօլին գոչեց.

—Շատ ծարաւ եմ։

—Ես ալ շատ ծարաւ եմ, ըսաւ Լիւսիէն. երթանք կաթ խմենք տիկին Լանտրիի տունը։

—Շատ աղէկ, սիրելիներս, ագարակ երթանք, ըսաւ Մառի-Մատրլէն ոտքի ելնելով։

Բացաւ վանդակերպ դուռն, որ դասատանը կը վիպէր կողմնակի, և երեքն ի մասին, ագարակատանին պարտէզն անցնելով, անոր տունը մտան։

Շարլոթ Լանտրի ախոռներուն մէջ զբաղած էր. Սանտրիյեոն հրամցուց պզտիկ աղջիկներուն երկու գաւաթ տակաւին գաղջ կաթ։

Երբ, վայրկեան մը ետքը, Բօլին քաշեց վարժուհին՝ չրջագիտուն՝ ինչ որ ըսել կ'ուզէր. «Երթանք», Սանտրիյեոն մօտեցաւ Մառի-Մատրլէնին, աղաչանք մը ակնարկեն մէջ։

—Է՛հ ուրեմն, ըսէ՛, Սանտրիյեոն, ըսաւ մանկամարդ աղջիկը։

—Եթէ ուզէիք, քիչ մը ձեզ հետ կուգայի։

—Բայց անշուշտ կ'ուզեմ, եթէ զբաղած չէք և տիկին Լանտրի թոյլ տայ։

—Սանտրիյեոն, կրնաս ընկերանալ Մառի-Մատրլէնին, ըսաւ ագարակապանուհին որ ներս մտած էր. բոլոր օրն աշխատեցար, և դուն գիտես որ ընաւ չեմ մերժեր քեզ անհրաժեշտ եղող հանգիստ մը։

—Շնորհակալ եմ, ըսաւ Սանտրիյեոն գլխի շարժումով մը որ իր գոհունակութիւնը կարտայայտեր։

Եւ ուրախ զուարթ, ինչ որ քիչ անգամ կ'ըլլայ, հետեւեցաւ Մառի-Մատրլէնին և պզտիկ աղջիկներուն։ Մինչեւ դարաստանին ծառուղւոյն մէջտեղն անխօս մնաց՝ խորհրդածելու կերպարանք ունենալով։

—Բա՞ն մը ունիք ինձ ըսելու, հարցուց վարժուհին։

—Այո։

—Ըսէք նայիմ, բարեկամուհիս, մտիկ կ'ընեմ։

—Նախ, կ'ուզէի... կ'ուզէի ձեզ համբուրել։

Մառի-Մատրլէն ճակատն անոր կարկառեց։

—Ա՛հ, զուշեց, միշտ բարեկամ էք ինձ։

—Բայց աղէկ գիտէք որ կը սիրեմ զձեզ, պատասխանեց մանկամարդ աղջիկը, ինքն ալ զայն համբուրելով, և իմ գորովս ձեզ համար՝ կը հաւասարի ձեր իմ վրայ ունեցած գորովին։

—Օ՛հ, այո, այնպէս չէ՞։ Որովհետեւ,

—Օ՛հ, այդպէս մի՛ կարծէք, գոչեց մանկամարդ աղջիկը ոգեւորութեամբ։

—Եւ եթէ ասկից չա՞տ, չա՞տ հեռու երթաք, հեծեց Սանտրիյեոն։

—Միշտ Մոնտրաժէ պիտի մնանք. ես պիտի չարունակեմ ագարակ դալ զձեզ տեսնել և դուք ալ, ազնիւ բարեկամուհիս, պիտի գաք զիս տեսնելու դղեակը։

Հէք Սանտրիյեոն ձեռները սրտին վրայ դրաւ և ակնարկին մէջ ճառագայթում մը երեւցաւ։

Անգլիական պարտէզին մէջտեղն հասած էին՝ յառաջկողմն ընդարձակ այն մարգագետնին որ դղեակը դարաստանէն կը բաժնէ։

—Ժամանակն եկաւ ձեռնէ բաժնուելու, ըսաւ Սանտրիյեոն, երբէք չեմ համարձակած այսքան մօտենալ դղեակին. եթէ տեսնուիմ...։

—Է՛հ ուրեմն, եթէ տեսնուիք, վախնալու ի՞նչ ունիք։

—Չեմ գիտեր։

Այս պահուս, քսան քայլ հեռուէն յանկարծ երեւցաւ կոմսուհին, դառնալով ծաղկեայ սպիրակներով եղերեալ ծառուղիէ մը։ Պզտիկ աղջիկները դէպ անոր վազեցին, զուարթօրէն կանչուռտելով. մայրի՛կ, մայրի՛կ։

Սանտրիյեոն փախչելու պէս շարժում մը ըրաւ։ Բայց Մառի-Մատրլէն քաղուկէն բռնեց և վար դրաւ զայն ըսելով.

—Տիկին կոմսուհին տեսած է զձեզ և չէք կրնար երթալ առանց զայն ողջունելու։ Մնաց որ, տեսէք, անիկա դէպի մեզ կուգայ։

(Շարունակելի)

և այս պատճառաւ Ֆրանսայի պատերազմական նախարարը ցաւ ի սիրտ հաստատած է թէ 1890ին նոր գրուած զինուորը 6,500 հոգի և 1891ին նոր գրուած զինուորը 12,400 հոգի պակաս են 1889ի օրէնքով գուշակեալ թիւէն։ Ինչպէս Ֆրանսայի նախակրթարանաց մէջ տղայոց թիւը մէկ տարիէն միւսն 5—6,000 հոգի կը պակսի, ճիշդ նոյն կերպիւ զօրաց թիւոյն աճումն յուսացուած հաւնմատութեանց չի հասներ։ ուստի, Գերմանք տեղի չունին ահաբեկելու, և նոր ծախուց և զոհողութեանց ենթարկուելու, կ'ըսեն այս գերման թերթեր։ Ուրեմն, լոկ դիւանագիտութիւն մ'է ըսել թէ՝ Ռայխթակին նոր օրէնք մատուցանելով՝ Ֆրանսայէն ետ չմնալ կ'ուզուի։ Իրօք փափաքուած բանն է միշտ Ֆրանսայէն աւելի զօրք և զէնք ունենալ։ Կը մնայ տեսնել թէ Ռայխթակին նոր օրէնք մատուցանելով՝ Ֆրանսայէն ետ չմնալ կ'ուզուի։ Իրօք փափաքուած բանն է միշտ Ֆրանսայէն աւելի զօրք և զէնք ունենալ։ Կը մնայ տեսնել թէ Ռայխթակը, գերման ազգին տնտեսական վիճակին խնայելու հոգածութեան մէջ, այս քաղաքականութեան ո՛ր աստիճան հաւանութիւն պիտի ցուցնէ։

Պ. ԿԼԱՏՍԹՈՆ իւր կնոջ և Սըր Էտուարտ Ուոթքինի հետ Սնօսդն լեռն ելաւ (Կալլէսի նահանգին մէջ) մինչեւ կէս մը, ուր սաստիկ հով մը մառախուղը վեր հանած և այս զբօսաշրջիկները պատած ըլլալով, Տիկին Կլատսթոն, որ մօր մը պէս կը հոգայ իւր երիկը, թախանձանքը խնդրեց այլ եւս յառաջ չտանիլ վերելքն, և Պ. Կլատսթոն, իւր կնոջ խօսքին անսալով, և այս տեսակ վտանգաւոր ձեռնարկութիւններն իւր բարեկամին՝ Պ. Ճէյմս Պրայսի թողլով, վար իջաւ, առանց Սնօսդնի գագաթն երթալու, որ սակայն՝ աւելորդ է ըսել՝ ասիական լերանց բարձրութիւնը չունի։ Վար իջնելուն պէս, Պ. Կլատսթոն հաւաքեալ դտաւ կալլէսցի կիրտիոս գեղջուկներու բարմանդամ պատուիրակութիւն մը, որ ուրիշ նուէրներու հետ, բրդէ սեւ գուլպայներու հաւաքածոյ մը նուիրեց, որք Կալլէսի գլխաւոր արտադրութիւններէն մին են։ Այս սեւ գուլպայներն հագնելով իւր սեւ «աքարքին»ներով, Պ. Կլատսթոն չէր մարդ մը պիտի երեւի ամենէն բծախնդիր կենցաղագէտին անդամ։

ԷՏԻՆԳԲՐԻ ԴՈՒՐԲՈՒՆ, որ Գերմանիոյ մէջ կ'անցնուն իւր ամառնային արձակուրդը, պարապ չի կենար բոլորովին, և Ռուսմանիոյ Էլիզապէթ թագուհւոյն՝ Բարէն Սիրվա զրադիուհւոյն՝ յօրինած մէկ թատերգութեան երաժշտութիւնը կը յօրինէ, որ կը յուսացուի թէ գեղեցիկ թատերանուագ (օբէրա) մ'ըլլայ։ որովհետեւ Անգլիոյ Թագուհւոյն այս որդին նոյնքան քաջ ծովային մարդ է որքան փափկանձակ երաժիշտ։

ՀԱՄՊՈՒՐԿի հնամեան որվհետեւ դեռ բաւական ժամանակ տեւելու երես ունի, Վիեննայի լրագրք կը կարծեն կամ մանաւանդ կը յուսան, որ Համպուրգի շրջանային գործառութեանց մէկ մասը պիտի անցնի Թրիէսթեի նաւահանգստին։

ԱԶԳԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ըստ յանձնարարութեան Ազգ. Վարչութեան, Պատրիարքարանի դիւանատունը ձեռնարկած է պարտաստել տեղեկագիր մը որուն մէջ մանրամասնօրէն նկարագրուած ըլլան թէ ինչ կերպով ընդունուեցան հոգեւոր Մաղթէոս և Գէորգ կաթողիկոսներուն համար Ռուսիայէն եկող հրաւիրակներն, ինչ ըն դունելութիւն եղաւ Գէորգ կաթողիկոսին որ Պրուսայէն եկաւ, ինչ արարողութիւններ կատարուեցան մայրաքաղաքիս մէջ Երկու կաթողիկոսներուն համար, թէ ինչ հանդէսով մեկնեցան կ. Պոլսէն։

Վերոյիշեալ տեղեկագիրը պիտի մատուցուի Վարչութեան, որ զայն հիմ բռնելով, բաս այնմ պիտի պատրաստէ Վեհափառ Տ. Տ. Մկրտիչ Ս. Կաթողիկոսի ընդունելութեան ծրագիրը։

Այնն. Ս. Պատրիարք Հայրն՝ Հրէից տարեգլխուն առթիւ՝ ընդհանրական գիր մը ուղղեց Բալտնապետի Գայմագամ Մօիզ Լէվի էֆէնտիի։

Տնտեսական խորհուրդն իւր նախընթաց օրուան նստին մէջ նկատողութեան առաւ Գասարիպի Թաղական խորհրդոյ մէկ գիրն, որով գլուխն գերեզմանատան նոր տեղին չուրջը պատով շրջապատելու համար արտօնութիւն խնդրած էր 500 ոսկւոյ փոխառութիւն մը ընելու թաղին ազգայիններէն։ Խորհուրդն առ այդ իւր հաւանութիւնը տալով որոշեց ըստ այնմ տեղեկագրել Ազգ. Վարչութեան։

Զբաղեցաւ նաեւ Գասարիպի, Օրթագիւղի, Էյոսպի Ս. Եղիա և Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ վերաբերեալ հաշուական ու կանոնային խնդիրներով։ Նոյնպէս ազգ. կալուածոյ ապահովագրութեան մասին բանակցութիւններ կատարեց ապահովագրական երեք ընկերութեանց հետ։

Յաջորդ նիստը պիտի գումարի յառաջիկայ երեքշաբթի ի Պատրիարքարան։

Մոսկուայի Լազարեան Ճեմարանին տեսուչ Պ. Գէորգ Բանանեանց, իր կնոջ ու աղջիկն, ընկերակցութեամբ Յովհաննէս էֆէնտի Թորոսեանի, երէկ այցելեցին Ազգ. Կեդրոնական Վարժարանն։ Ինամակալութեան անդամ և վարժարանին անօրէն Յարութիւն էֆ. Մոսիշեան արժանաւայել ընդունելութիւն ըրաւ ռուսահայ հիւրերուն։ Պ. Բանանեանց ամբողջ չէնքը պտտցուեցաւ, դասախօսութեանց ներկայ գտնուեցաւ և աչքէ անցուց ընդարձակագոյն։ Վարժարանին ծրագիրը քննեց և իր զարմացումն յայտնեց այդքան կարճ ժամանակի մէջ վարժարանին ըրած յառաջդիմութեան վրայ։

Պ. և տիկին Բանանեանց և Օր. Բանանեանց այցելեցին նաեւ Բերայի աղջիկանց Արուեստագիտական Ուսումնարանն, որուն բոլոր մասերն աչքէ անցուցնելով, մեծապէս զոհ մնացին, մանաւանդ սանուհեաց ճարտարարուեստ ձեռագործներէն։

Լազարեան Ճեմարանի յարգելի տնօրէնն վաղը ընտանեօք Նիկոմիդիա կ'ուղեւորի, Արմաշու տօնին առթիւ մէկ երկու օր անդ մնալու համար։

Մեծ. Տբթ. Թորգոմեան հետեւեալ նամակն ուղղած է մեզ, զոր անկողմնակալութեան պարտ կը համարինք հրատարակել, առանց պատասխանատուութիւն ստանձնելու. յարելով թէ նամակին մէջ կիսչուած բացատրական գիրը մեզ հասած չէ, և մեք եւս փափաքող ենք Պատ. Հոգաբարձու բժշկաց տեղեկագրոյն հրատարակման։ Մեզ հաղորդուած լուրէն դատ, զոր յարգոյ Տոքթորը կը յիշէ, մեզ ուրիշ տեղեկութիւն չունինք գործին վրայ, զոր կը յուսանք թէ Ազգ. Վարչութիւնը կը պարզէ պաշտօնապէս։

ՄԵՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ

Ցատն և կենդ օր առաջ երբ Արեւելքի մէջ կարդացի թէ՝

«Ազգ. Հիւանդանոցի բժիշկ Հոգաբարձուները» «տեղեկագիր մը պատրաստելով մատուցած են,, ,,Ամեն. Ս. Պատրիարք Հօր, յորում կը յայտա-,, ,,բարեն թէ իրենց պաշտօնի սկսած ատենէն,, ,,ի վեր ցարդ անձամբ քննութիւններ կատա-,, ,,րած ըլլալով, Հիւանդարանի նախկին վիճա-,, ,,կը գոհացուցիչ գտած են, եւ խոշի պարտ,, ,,կը համարին խոստովանիլ թէ նախորդ պատ-,, ,,ուարտան Հոգաբարձութեան երկաբամեայ,, ,,պաշտօնավարութիւնը ծնծղոյ տարածայ-,, ,,նութիւններն, որք տեղի ունեցան երբեմն,, ,,42 բժիշկներու ստորագրած տեղեկագրին հը-,, ,,րատարակութեան առթիւ, իրական դիմ չու-,, ,,նին,,

Փութացի անձամբ Հիւանդանոցի Հոգաբարձու յարգոյ բժշկաց քով, եղածը մտէն իմանալու և ճշմարտութիւնն իւր բուն աղբիւրէն լսելու։ Պատ. Հոգաբարձու բժիշկները նախ և յառաջ ինձ կարգացուցին նամակ մը, Հոգաբարձութեան անդամներէն Մեծ. Ալիքսան էֆ. Խորասանճեանէ շարադրեալ և ստորագրեալ, զոր Արեւելքի Խմբագրութեան ուղղելով, Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն հրատարակեալ լրոյն ճշմարտութենէ տարբեր լինելը կ'ուզէր յայտնել հրապարակաւ։ Հոգաբարձու բժիշկներն ըսին ինձ յեսոյ թէ իրենց պաշտօնավարութեան օրէն մինչեւ ցայսօր անձամբ մանրակիտ քննութիւններ կատարելով, Հիւանդանոցի նախկին վիճակը, (և նախկին վիճակ ըսելով, ըստ իրենց ասութեան, հանգուցեալ Տքթ. Օրմանեանի օրերէն մինչեւ վերջին ատենները իմանալու է, (*) ԲԺՇԿԱԿԱՆԱՊԷՍ ՄԻԱՅՆ գոհացուցիչ գտած չեն, այլ ընդհակառակը զայն գտած են արդի բժշկական օրինաց և պահանջից հակառակ շատ մը թերութիւններով, զորս մի առ մի տեղեկագրած՝ են առ Պատկառելի ժողովն Ազգ. Վարչութեան, առանց հակառակ կարծիք յայտնելու ընդդէմ 42 բժշկաց դնողագրին, զոր և իրենք ստորագրած էին ժամանակին։

Մինչեւ ցայսօր կ'սպասէի, և ինձ հետ շատեր կ'սպասէին, որ Արեւելքի հրատարակութեան և յարգոյ Հոգաբարձու բժշկաց խոստովանութեան մէջ եղած հակասականութիւնը պարզուէր և յայտնուէր, սակայն խնդիրը որպէս էր՝ այնպէս մնաց։

Իրրեւ մին ի 42 բժշկաց, ես խոշի պարտք կը համարիմ այսօր խնդրել հրապարակաւ, որ կամ Ազգ. Վարչութիւնը հաճի հրատարակել հոգաբարձու բժշկաց տեղեկագրին նոյնութիւնը (**), և կամ հոգաբարձու բժիշկները, իրենց մատուցած տեղեկագրէն մէկ մէկ օրինակ ալ ազգային թերթերու յղեն, որպէս զի ճշմարտութիւնն յայտնուի վերջապէս և անհաճոյ տարաձայնութիւնը վերջ գտնան, և այս ի սեր Հիւանդանոցի անտերունչ պատսպարելոց, որոց, ո՞ զիտէ, մենք ալ մի օր կրնամք վիճակիկ լինել։

Ցանուն պատսպարելոց խնդրելով զայս, կը յայտարարեմ այժմէն, որ երբ Հոգաբարձու բժիշկները, (որոնց վրայ վստահութիւնս այնչափ կատարեալ է, որչափ իրենց հետ ունեցած բարեկամութիւնս անկեղծ և վաղեմի), իրենց ստորագրութեամբ յայտնեն մի օր, թէ Հիւանդանոցի նախկին վիճակը իրաւ գոհացուցիչ եղած է ԲԺՇԿԱԿԱՆԱՊԷՍ, այժմէն կը յայտարարեմ որ ես այն օրը նոյն այս Արեւելքի մէջ, հրապարակաւ «մեղայ» գոչելով, ես պիտի առնեմ դիտողագրին տակը դրած ստորագրութիւնս, և ինձ հետ վստահ եմ որ բոլոր արուեստակիցներս ալ ես պիտի առնեն իրենց ստորագրութիւնը, և բժշկի մը ստորագրութիւնը, իւր պատիւն է, ի՞նչ կ'ըսեմ, իւր կեանքն է։

Տոքթ. Վահրամ Ե. Թորգոմեան

Սկիւտար, 23|11 Սեպտ 92

Ըստ բարեպաշտական ըղձից և հրաւիրանաց Ազգ. Մկրտիչ էֆէնտիի Խասան և իւր առաքինասէր դերդաստանի, Գեր. Տ. Տրդատ Ծ. վարդապետ Պատեան հանդերձեալ է յառաջիկայ 13 սեպտ. կիւրակէ ի տօնի վերացման Ս. Խաչի հանդիսաւոր Ս. Պատարագ և պաշտօն մատուցանել յեկեղեցւոջ սուտ, ի յիշատակ հոգւոյ Ազն. գերդաստանի։

Զայս ի գիտութիւն, բարեպաշտ ժողովրդեան ծանուցանելով, մնամք յարգանօք

Ի զիմաց Թաղական Խորհրդոյ

Պէշիւքտէրէի

Փ. Ատենադպիր — Ատենապետ

ՍԱՀԱԿ Ա. ԽԱՆՇԵԱՆ — Կ. ԷՊՈՒԱՆԵԱՆ

Պէշիւքտէրէ 230

1892 սեպտ. 9 — 1—1

Հնորհեալ շուրջ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ։— Պետական խորհրդոյ անդամ անուանեցաւ Շերիֆ Հիւսէյին պէյ։

Եպարքոսական թղթակցութեանց դիւանին դեր-տնօրէն անուանեցաւ նոյն դիւանի քարտուղարներէն Սալիմ պէյ, որուն իբրեւի երկրորդ աստիճան տրուեցաւ։

Նոյն դիւանին երկրորդ դեր-տնօրէն անուանեցաւ Սալիմ էֆէնտի։

Սանիյէ Միլիթմիեի աստիճան տրուեցաւ Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան կամուրջներու և խճուղեաց վարչութեան առաջին քարտուղար Սալիհ էֆէնտիի, Սկիւտարի կառավարչութեան թղթակցութեանց առաջին քարտուղար Բէշիր պէյի, երբեմն Նահանգաց գործակալարի պաշտօն վարող Ապտիլղասէր էֆէնտիի և Ա.յաշ գաւառակի (Էնկիւրի) գայմագամ Հաճի Մուսթաֆա էֆէնտիի։

Առաջին կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Սպարապետի Դրան ընդհանուր պետոյց ճիւղին նախագահ Ֆերիդ Ահմէտ փաշայի։

Երրորդ կարգի Մէճիտիյէ՝ Ներմանական նախարարութեան Մէջթուպճիի օգնական Թայեար էֆէնտիի։

Երրորդ կարգի Օսմանիյէ՝ շրջենական Կուրճի ընկերութեան տնօրէն Տիմիթրաքի էֆէնտիի և չորրորդ կարգի Օսմանիյէ՝ նորա եղբօր Թոտորաքի էֆէնտիի։

Չորրորդ կարգի Մէճիտիյէ՝ ատաղձի վաճառական Խարալամպօս էֆէնտիի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՄՈՒՆՔ. — Առողջապահական վարչութիւնն հնամեամի դէպքերու վրայ հետեւեալ տեղեկագիրը մատուցած է կայս. պալատան առաջին քարտուղարութեան։

Թէհրանի առողջապահական բժիշկը սեպտեմբեր 10 թուականաւ հեռագրած է թէ Ատրպատականի նահանգին մէջ Զէնճանի հարաւային կողմը գտնուած Ղէրուզ անուն տեղի հնամեամի 300 դէպքեր ու 150 մահեր պատահեր են և Մազենտրան նահանգին Ամուլ գիւղաքաղաքի շրջակայ Թուշ անուն տեղը՝ 121 դէպք ու 40 մահ։

Հոռէյսամի առողջապահական բժիշկը սեպտ. 9 թուականաւ հեռագրած է թէ սեպտ. 3էն 9, ի Հոռէյսամ հնամեամի 544 դէպքեր ու 129 մահեր պատահեր են, Պէյթէլֆագիյէի մէջ 20 դէպքեր ու 5 մահեր, ի Զէյսիդէ՝ 270 դէպքեր ու 78 մահեր և ի Մարաբա՝ 3 դէպքեր ու 2 մահեր։

Կարնոյ կուսակալութիւնն հեռագրած է թէ Կարնոյ քաղաքին մէկ հիւանդանոցին մէջ դարմանուելու վրայ եղող զինուոր մը սեպտ. 8ի իրիկունն հնամեամ բռնուելով հետեւեալ առաւօտուն մեռեր է։ Դալէ Պողազը մաքրանոցին մէջ Պաթումէ եկող ուղեւորներէ մին մեռեր է։ Կէօնիկի մաքրանոցին մէջ սեպտ. 6ին տարափոխիկ հիւանդութեանց ո և է դէպք չէ պատահած։

Տրապիզոնի առողջապահական քննիչն հեռագրած է թէ քաղաքին ու շրջակայից առողջական վիճակը գոհացուցիչ է։

Սինոպի մաքրանոցին վերատեսչին կողմէ եկած հեռագրոյ մը նայելով՝ Մախսուսէի «Բարս» շրջենաւին ուղեւորաց հետ գտնուող այն աղջիկն, որ հնամեամ բռնուած էր, ինք ժամ յետոյ մեռեր է և հագուստներն ու զոյքերն այրուելով առողջապահական ու ապահովական ուրիշ միջոցներ եւս ձեռք առնուած են։ Նոյն շրջենաւի ուղեւորներէ մին՝ 55 տարեկան մարդ մը՝ հնամեամ վարակուեր է։ Բարանթինա սպասող վեց շրջենաւերու և 31 առագաստանաւերու 442 նաւաստաց ու 457 ուղեւորաց և քարանթինայի շրջային պահպանան զինուորաց առողջական վիճակն և Սինոպի ու շրջակայից հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։ Սեպտեմբեր 9ին Գավագի մաքրանոցին մէջ քարանթինա սպասող 4 շրջենաւերու և 14 առագաստանաւերու 416 ուղեւորաց ու 226 նաւաստաց առողջական վիճակը գոհացուցիչ է։

ՆԱԽԱԳԱՀ

Առողջապահական Ժողովոյ

10 սեպտեմբեր

—Ադրիանուպոլսոյ կուսակալութիւնը սեպտեմբեր 10 թուականաւ հեռագրած է Ներքին գործոց նախարարութեան՝ թէ նոյն գիւղերը երկաթուղւոյ կառախումբով ի Ձիրը Մուսթաֆա փաշա 38 ուղեւորներ ժամանելով քարանթինայի ենթարկուած են։ 29 ուղեւորը աւարտելով քարանթինայի պայմանաժամն, ազատ անցագիր ստացեր են։ Թէ՝ քարանթինա սպասողներու և թէ մեկնողներու առողջական վիճակը գոհացուցիչ է։

— Ֆրանսական կառավարութիւնը Պասթոր Լէքէոր երրորդ աստիճանը նուիրած է կայս. Թանգարանին տնօրէն Համտի պէյի։ Կայս. Իրատէ մը արտօնած է այդ պատուանշանի գործածութիւնը։

—Քաղաքապետութիւնը տեղեկագրած է Ներքին գործոց նախարարութեան՝ թէ թաղապետութեան Դ. և Թ. շրջանակաց մէջ թաղեր ու փողոցներ մաքրուած, ապահեղական դեղեր թափուած և հանրային առողջութեան վնասող պտուղներ և այլն ծովը նետուած են։

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ։— Մեծ-եպարքոս Բարձր. Ձէվատ փաշա Նախընթաց իրիկուն կայս. պալատ երթալով Վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւն ունեցաւ։

—Բարձր. Սպարապետն և Ներքին գործոց ու երկրական Վսեմ. Նախարարք երէկ կայս. պալատ երթալով ստացան Վեհ. Սուլթանի հրամանները։

Ի Բ. ԴՈՒՌՆ։— Արտաքին, Դատական և Առեւտրական ու Հանրօգուտ շինութեանց Վսեմ. Նախարարներէ և այլ բարձրաստիճան պաշտօնատարներէ կազմեալ յանձնաժողովն երէկ ևս ի նիստ գումարուելով՝ հիւպատոսներու գործառնութեանց նկատմամբ խորհրդակցութիւններ կատարեց։

—Ֆրանսական, աւստրիական և ռուսական դեսպանատանց գործակատարք և պուլկարական գործակատար Պ. Տիմիթրոֆ երէկ Բ. Դուռն երթալով յաջորդաբար տեսակցեցան Բարձր. Մեծ-եպարքոսին ու Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՔ։— Պետական խորհրդոյ ներքին ճիւղն որոշած է ըստ առաջնոյն հաղուստ չնեել Ատանայի նահանգին Բահաս գաւառակի բանտին մէջ գտնուող բանտարկեալներէ երկու հարիւր աղքատ անձանց։ Այս որոշումն Վեհ. Սուլթանին մատուցանելով՝ Ն. Վեհափառութիւն հրամայած է որ ձեռնհաս իշխանութիւնք ուշադրութեան առնուն այդ խնդրոյ վերաբերեալ մէկ քանի կէտեր ինչպէս նաև նոյն նահանգին բանտերու յատկացեալ գումարին վրայ նորկայ տարիէն սկսեալ յաւելում մը ընեն։ Վեհ. Սուլթանը նկատելով որ երբ մայրաքաղաքիս ու գաւառաց բանտերուն մէջ գտնուող ոճրագործաց լուսանկարներն առնուիլ հարկ ըլլայ, լուսանկարիչներ կը բերուին, պարագայ մը որ ծախքերու դուռ կը բանայ, հրամայած է որ Դատական Նախարարութեան ու Ոստիկանութեան պաշտօնատանց մէջ մէկ մէկ մը նոյնն լուսանկարիչներ գտնուելու, այդ կերպիւ յառաջ գալիք ծախքը երմամացոյցին մէջ անցնելու և այլ մանրամասնութեանց վրայ քննութիւններ ու խորհրդակցութիւններ կատարելով արդիւնքն Իրեն մատուցուի։ Կայս. սոյն իրատէն գործադրելու համար Դատական Նախարարութեան պաշտօնատան մէջ յանձնաժողով մը կազմուած և գործի սկսած է։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ։— Երէկ ծանուցուեցաւ թէ ի Սինոպ Մախսուսէի Բարս շրջենաւին մէջ հնամեամի դէպք մը պատահած ըլլալով այդ շրջենաւ, որ քարանթինայի պայմանաժամն աւարտած էր, կրկին անգամ տասնեհինգ օրեայ քարանթինայի ենթարկուած է և նոյն պահուն մէջը գտնուող առողջապահական պաշտօնեայք ևս քարանթինայի ենթարկուած են։ Արդ, երէկ, Տօրթ. Զաբբրեան էֆէնտի և երկու քարտուղարներ Սինոպ ուղեւորեցան քարանթինա սպասող պաշտօնէից տեղապաշտօնավարելու համար։ Տոքթ. Խալիլ էֆէնտի ևս առաջին մեկնող շրջենաւով Սինոպ պիտի ուղեւորի։

—Բարձրագոյն և մասնաւոր վարժարանաց քննիչ Զիհէաէտտին պէյ՝ ձեռնհաս իշխանութեան մատուցած է ծրագիր մը, յորում նշանակուած են առողջապահական գործոց ու թաղապետական գործառնութեանց համար ամեն ժամանակ ի գործ դրուելիք միջոցները։

—Բաէն գաւառակի մէկ քանի գիւղերու մէջ հնամեամը ճարակած և կարնոյ քաղաքին մէջ ալ մէկ քանի դէպքեր պատահած ըլլալով, ի մօտոյ բժիշկներ ու դեղեր պիտի ղրկուին անդ։

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՄՆՏՈՒԿ։— Կայս. Իրատէ մը արտօնած է որ Պոլսոյ Ապահովութեան Մնտուկը Մուգաթալը կալուածոց փոխարէն փոխատուութիւն ընէ։

ՖԻԼԱՆՍԱԿԱՆ առաջին Հանրապետութեան հաստատման հարիւրամեակին առթիւ երէկ Բերայի ֆրանսական դեսպանատան մէջ հանդիսաւոր ընդունելութիւն կատարուեցաւ։ Դաղթականութեան առաջին պատուիրակ Պ. Կասնէլ բացակայ ըլլալով, երկրորդ պատուիրակ Պ. Սիլվէն Միլ պարագային յարմար բանախօսութիւն մը արտասանեց որուն պատասխանեց գործակատար Պ. Պուլկարէլ։ Եռագոյն ներկայք հրաւիրուեցան ճոխ շքասեղանի մը։

ՈՉԽԱՐԱՑ ԾԱՂԿԱՆՏ։— Ի Բիւշիք Զէքմէէ Բիւշիք Հայգալը անուն տեղը արօտի մը մէջ գտնուած 263 ոչխարաց մէջ ծաղկանտ երեւան եկած ըլլալով, հարկ եղած առողջապահական միջոցները ձեռք առնուած և այդ ոչխարք հակոզութեան ներքեւ առնուած են։

ՕՍՄ. ՀԱՆՐԱՑԻՆ Պարտուց վարչութեան օգոստոսի հաշուեցոյցը, զոր հրատարակեցինք երէկ, ցոյց կուտայ թէ զանազան ճիւղերու հասոյթն է 183,644 օսմ. ոսկի։ Նախորդ տարւոյ միեւնոյն ամսոյ հասոյթն եղած էր 172,479 օսմ. ոսկի, որով այս տարի 11,165 ոսկւոյ առաւելութիւն մը կայ։

—Հանրային Պարտուց վարչութեան գերմանացի պատուիրակ Պ. Լինտօ որ ի դարձին Եւրոպայէ քարանթինա կը սպասէր ի Մուսթաֆա-Փաշա, մայրաքաղաքս հասաւ։

ՄՈՆԻԴԷՕՌ ՕՐԻԱՆԴԱԼ լրագրոյ վարչական ճիւղին գլխաւոր պաշտօնեայ Պ. Նիքօլա Քարա Նախընթաց օր մեռաւ ի Գալաթա-Պղղի։ Հանգուցեալը ժամանակաւ լաւ գիրք մը ունէր առեւտրական հրապարակին վրայ, բայց բազմին ձախորդութիւնք հարկադրած էին զինքը քաշուիլ այդ ասպարէզէն։ Ապնիւ և բարեհամբոյր բնաւորութեան տէր անձ մըն էր։ Այրի մը եւ հինգ որբեր կը թողու դժբաղդ կացութեան մը մէջ։

ԹԷՐԼԻ ՊԱՇԷՐԻ փլած չէնքին խնդրոյն առթիւ հարցաքննութեան ենթարկեալ թէտէքի ու Մավրօքորտաթօ յայտարարած էին թէ իրենք այդ գործին մէջ ուղղակի մասնակցութիւն ունեցած չըլլալով, կարելի չէր զիրենք ի դատ կոչել։ Սակայն այս առարկութիւն օրինաց համապատասխան չըլլալով, որոշուած է հարցաքննութիւնները շարունակել, որով այդ երկու անձանց նորէն կոչնագիր ուղղուած են։

ԳԻՆՈՎՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՆՔՆԵՐԸ.— Նախընթաց գիշեր Ադր. Պոլսէն Սիրքէճիի կայարանը ժամանող կառախումբէն վաթսուն տարեկանի մօտ կին մը իջնելով կը սկսի աստիս անդին պտըտիլ կառք մը գտնելու համար որ իր բեռները տուն փոխադրէ. կայարանին կառապաններէն Ահմէտ իր դիմացը կ'նէնէ և կ'առաջարկէ որ ինք փոխադրէ բեռները. կինը կը հաւանի և կ'ըսէ որ իր տունը Սիւլէյմանիէ կը գտնուի։ Ահմէտ բեռները կառքին մէջ կը տեղաւորէ, կինն ալ կը նստեցնուի և ինք ձիերը ճաղկելով կառքը ճամբայ կ'նէնէ սրարշաւ։

Բայց ըստ որում մեր կառապան Ահմէտը բարի սովորութիւն մը ունէր որմէ աշխարհ մէկդի գար չէր չեղեր, սովորութիւն մը չա՛ս անմեղ, սակայն քանի մը գաւաթ օղի ճնկել, հետեւապէս կառքն ուղղակի գինետան մը առջեւ կը տանի, և խոշոր գաւաթ մը օղի կ'կնէ, նորէն կը խարազանէ ձիերն ու կառքը կը մեկնի խօլարշաւ։ Հազիւ տասը վայրկեան կ'անցնի, կառքը նորէն կանգ կառնէ... գինետունի մը առջեւ։ Ահմէտ գաւաթ մըն ալ կը լեցուցնէ կոկորդն ի վար և նորէն շարունակէ ճամբան՝ երգ մը մրմռալով հիմակ քիթին տակէն։ Խեղճ կինը բան մը չէր հասկնար այս յանկարծական դադարներէն և յիմարական մեկնումներէն։ Վերջապէս, մինչեւ ժամն երեքը Ահմէտ գինետունէ գինետուն պտըտելէն, քիթին ծայրը չտեսնելու աստիճան գինովցաւէն և առանց ուր երթալիքը գիտնալու՝ անծանօթ մթին փողոցներ թափառելէն ետքը, կառքը կը կեցուցնէ Հրդան Բազարի հրապարակը։ Հոն, կինը, դողասարսափ, լալագին աղաղակներ կը սկսի արձակել, զորս իմանալով անկից անցնող ոստիկաններ, կառքը, կինն ու Ահմէտը Նուրը Օսմանիէի ոստիկանատունը կը տանին, ուր՝ իրողութիւնն հասկցունելով՝ խեղճ կինը տունը կը ղրկուի, իսկ չուառական կառապանն ալ, որ տակաւին իր կարապի երգը կը մրմռար, Հասան բաշայի ոստիկանատունը կը փոխադրուի։

ԵԱՅԱԷՆ Երուսադէմ շինուած երկաթուղւոյն բացման հանդիսին ներկայ գըտնուելու համար կայս. հրամանաւ անդ ղրկուած կայս. թիկնապահ Ֆերիդ ճէլալ փաշա եօթա ժամներ է։ Ծանձման գործողութիւնը կատարուած ըլլալով, բացման հանդէսն ի մօտոյ պիտի կատարուի։

ՄՇՈՑ նորընտիր կառավարիչ Հաւիպ փաշա, իւր պաշտօնին վերաբերեալ հրամանագիրն ստացած ըլլալով, մէկ քանի օրէն իւր պաշտօնատեղին պիտի ուղեւորի։

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ.— Ապտուլլահ էֆէնտի անուն անձ մը աղերսագիր մը մատուցանելով Դուխին գործոց նախարարութեան, առաջարկած է որ ասիական երկաթուղիով Հայտար Փաշա բերուած ապրանքները մայրաքաղաքս փոխադրելու գործն եթէ իրեն յանձնուի, գուտ հասոյթի հարիւրին քսանը պիտի տայ Մախսուսէի վարչութեան։ Այս առաջարկ ընդունուած է նոյն նախարարութեան կողմէ։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԷԿի ԹԻՒՆ. — Դատական նախանձելի անխոնջ գործունէութեամբ կը շարունակէ իւր գործն, որ է գիտնալ թէ մարդուս մարմնոյն մէջ արիւնն ինչ արագութեամբ կը շրջաբերի և ինչ զանազան թանձրութիւններ ունի։

Առջի օրը Իպրահիմ անուն անձ մը, ի Բասրա փաշա կռուի բռնուելով շաբաթաճառ Իսմայիլին հետ, որ անոր սկըզբունքին հակառակ խօսքեր ընելու անխոհեմութիւնն ունեցած էր, դանակը կը հանէ և անոր փորը կը քշէ։ Նոյն պահուն անկից անցնող երիս էֆէնտիներ վրայ կը հասնին և ձերբակալելով այդ յախուռն մարդասպանը, Բերայի ոստիկանութեան կը յանձնեն։

Երէկ գիշեր բանւոր Մէմիշը, չափազանց գիւրազգած անձ մը, չի գիտնար և խոշոր դաշոյն մը հանելով Ստեփան անուն հայու մը ձախ կուշտը կը փարսէ. այսչափով չի բաւականանար. դուրս կը հանէ դաշոյնը և չորրորդ հարուած մըն ալ անոր գլխուն կ'իջեցունէ. գուցէ փորձուէր իր պողպատին ծայրը Ստեփանին մարմնոյն շատ մը ուրիշ կողերուն զգցունել փափկութեամբ, սակայն ժամանակ չունենար. ոստիկաններ վրայ կը հասնին և՝ թէ՝ մին թէ միւսը ոստիկանութեան դուռը կը տանին։

Վակտրան

ՂՍՆԴԹԱ, 11 Սեպտեմբեր

ՐԵԹԱՅԻ ՓՈՇԱՌԱԿԱՐԳՈՒ

3 ամիս Լոնդոնայի վրայ	109 3/4
3 » Փարիզի »	22 95

ՕՍՄԱՆԵԱՆ ՓՈՇԵՈՒՐԹ

Երէկ երեկոյ զոց. [Միաց. Դ. Սէրի]	— —
Բերայի մէջ » »	24 03
Առաւօտուն բացուեցաւ » »	24 01
Կէս օրին » »	23 38
Թանվիրաթը Օսմանիյէ երէկ երեկոյ	— —
» » Ժամ 3ին	— —

ՐԵԹԱՅԻ ԱՐԺԵԹԴԻՈՅ

Փոխառութիւն Սէրի	— —
» »	— —
» »	24 01

ԲԱՆԿՈՏՈՄԱՐ

Մօսիէմ Ժէնէրալ Անգլ. Լր.	5 06
Քրէտի Ժէնէրալ » »	7 30
Պանք տը Բոնս. » »	4 30
Սօս. Շանտ է փալ. » »	4 18
Ռէժի » »	— —
Թրամուէյ » »	595
Բուսմէլիի երկաթուղի ֆր.	91 3/4
Բանքնոտաց Լաւրիօսի Դ. կ.	84

ՐԵԹԱՅԻ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի զրշ.	100
20 ֆրանկանոց »	87 33
Անգլիական ոսկի »	110 15
Մարք Գերմանական ոսկի »	137 20
Իմպէրիալ »	89 20
Ֆրիմից »	51 18
Բուպլ Ամերիքայի »	9 02
Մէջ. արծաթ [տալր.] »	197 29
Մանր արծաթ »	190 20
Մէճիտիյէ »	96 20
Թասֆիյէ »	— —
Տոկոս Ղալաթիոյ Սահրաֆանի »	5

ՎԱՆԱԿԱՆ ՅՈՒՇԱԳԻՐ

(Ս. ՍԱՐԳԻՍ ՄԵՆԱՍՏԱՆ)

«Վանքերու վրայ կ'արժէ զբաղիլ,... օր մը անոնց վրայ ուրիշ յիշողութիւն չմնայ զուցէ, բայց եթէ անոնց վրայ գրուածներն։» [ԱՐԵՒԵԼՔ, 2504.]

Ի միջի այլոց, այս յ՝ այժ արգարացի տողերն ալ կը նշանակեր Աբ-ելլ, մամիա 30ին տպուած իւր մասնաւոր խրբ

կը հակցուի թէ սոյն Մենասան կը դտնուէր Եդեսիոյ Սրբոյ-Պօղոս արուարձանի մէջ որ անշուշտ վանքէն առած լինելու էր իւր անուան ծագումը։

Այժմ բուն այդ արուարձանի հետքերը, իսկ ընկած գեղեցիկ տակէն միայն երեւան կ'ելնեն երբեմն։ բայց Սարգսապոլսոյ երկու յարակից մասերն, մին՝ վանքի բլրին հարաւակողմը Քասասան-Քարայ անուամբ, և միւսն՝ արեւելակողմը վանքին հանդէպ՝—ինչպէս կը կարծուի, Հռովմայեցի վաղեմի զաւշանակալի մ'ադաւադեալ—Լաբիր անուանակոչութեամբ, դեռ ակներեւ կը կենան, բնակեալ զանազան կողմերէ հեռազեւեռ հոնտեղերը գաղթող քրդական խառնուրդ տարբերէ։

Զմոռնանք նշանակել, թէ վանքին մէջ և շուրջը կը գտնուին անհամար վիմափոր դամբարաններ, կամ քարայներու մէջ և կամ որոշակի՝ ահագին միակաւոր քարէ չինուած դատ կափարիչներով. այնպէս որ կարելի չէ այդ տեղերը դրեթէ քանի մը մեգը տեղ փորել, առանց այդ կարգի առարկայի մը—քարայր, դամբարան, դիւսապատ ճրագ, և չիրմազարդ հաշտ-ան—հանդիպելու։ ուստի ամէն նշանակ կը ցուցնեն թէ ի սկզբան անդ, տեղւոյն վրայ եղած լինելու է ընդարձակ գերեզմանատուն մը, և ուշադրաւ քանի մը ապացուցական պարագայներէ իրաւունք կ'ունենանք այդ գերեզմանատան սկզբնաւորութիւնը մինչեւ իսկ անտի քրիստոնէական ժամանակի վերագրելով, վանատեղին ևս մեհենատուն ենթադրելու, զոր՝ Հայոց Առաջին Լուսաւորչայ մին, Թադէոս առաքեալ՝ ինչպէս յայտուր՝ նմանօրինակ պարագայից մէջ, փոխարկած լինի քրիստոնէական հաստատութեանց։

Սոյն վանքի տաճարին տակ գտնուած քարայրն, մասնաւորապէս, հռչակուած էր Աչ Եպիսկոպոս անուամբ, յորում նոյն իսկ հեռի վայրերէ բերուելով կը թաղուէին անուանի եպիսկոպոսք և սրբակենցաղ հարք նահանգիս և շրջակայից, որոց նախկին յոյժ «կրօնականացեալ» վիճակն դիւրաւ կ'երեւակայուի այն անթիւ կրօնապատկան շէնքերէ, յիշատակագրերէ և զանազան նշաններէ գրեթէ ամենուրեք սփռեալ զմեզ շրջապատող լեռնային գօտիներու մէջ, զորս իրենց արդի լքեալ և կիսաքանդ երեւոյթին տակ՝ մարդ չկրնար դիտել անտարբեր և անզգած։

Միշտ գայթակղած ենք երկուց պատմագրաց, Միքայէլի Ասորւոյ եւ Մատթէոսի Ուռհայեցւոյ՝ նահանգիս երբեմնի լեռնաբնակ վանականաց եւ միանձանց թուոյն վերաբերութեամբ հաղորդած վիճակագրական ծանօթութեանց վրայ, որոց առաջինն՝ 90,000 և երկրորդն 12,000 կը նշանակեն այդ թիւ։

Բայց ամէն անգամ որ հոգեպարար և կրօնասիրի մը համար յոյժ հաճելի պատեհութիւնը կ'ունենանք այդ նախնի սուրբ հայց աղօթանուէր շնչով նուիրագործեալ լեռներն այցելու եւ անձնուրաց ճգնութեանց անհամար խորհրդաւոր սրբավայրերը անձամբ դիտելու, զգալապէս կը դեղեւի մեր գայթակղութիւնը՝ այդ բաւական խոշոր թիւերուն վրայ։

Ասա՝ յիշենք նաեւ այն աւանդութիւնը, որուն համեմատ, քաղաքիս և անմիջական շրջակայից մէջ կանգուն եղած են երբեմն 361 եկեղեցիք։ այս միջակ թիւն ալ՝ առ բազումս կրնայ նախկին քաղաքի մը եկեղեցեաց 1001 թուոյն պէս խորհրդաւոր երեւիլ մանաւանդ, քան իրական. բայց հաւանականութեան կը մօտեցնէ զմեզ այն պարագան թէ 5-6 դարուց յետ զաշրջութենէ մը յետոյ, այժմ իսկ, կարեւոր թիւ մը կը ներկայացնեն, եթէ թուահամարի առնուին գաւառիս մէջ հին ժամանակէն մինչեւ ցարդ իրենց յատկանշանները պահող եկեղեցատեղիք, որոց քիչերուն սակայն անունները ծանօթ մնացած են, զորս նշանակած ենք երբեմն Աբեղեալի 90 յունուար 19 ի թուով, և այս պատեհութեամբ՝ անոնց վրայ կը յաւելունք Ս. Աստուածածնի (Թադէոս առաքեալէն հիմնարկուածէն դատ) և Ս. Թէոդորոս, որք մոռացմամբ դուրս մնացած էին յայնժամ հրատարակուած եկեղեցեաց ցանկէն։

Ս. Սարգսի վանքի տաճարին տակ գտնուած ընարելոց այդ վերջին բընակարանին մէջ հանդիպիլ փափագած է և՝ անուանին Աբբայ Եփրեմ Խուրի, զի կ'ըսուի թէ սրբասնունդ Աբբայն իր հոգեւանդի վայրկենին՝ կտակատոմս մը ձեռքին մէջ ունէր, յորում կը յանձնարարէր որ իւր անարժանաշնչը «ընդ քարշ ածելով» տանին թաղեն այն բատորերկրեայ հանգստարանին մէջ։

Աւելորդ է ըսել թէ հոգեկրօն Աբբային կտակն իրագործուած է··· ըստ «սկզբանց», այսինքն թաղուած է վերջապէս անդ, ուր կը փափաքէր. բայց իւր կտակին պայմանք «ճշդիւ» չեն յարգուած· զի աւանդութիւնը կ'ըսէ թէ իւր յուշարկաւորք զինքն «ընդ քարշ» վանք չը տարին։

Ահա, այս կոչները· մինչեւ իսկ հին ժամանակի բարի մարդիկն ալ գայթակղեցուցած են եղեր, ի մասին տրամադրութեանց ճիշդ և խղճմիտ գործադրութեան։

Այդ միեւնոյն դամբանավայրին մերձ թաղուած լինելու է Գ. Դարուն ապրող Խառանու Դանիէլ եպիսկոպոսն ևս որոյ յուսական և ասորական ծանօթագիր պարունակող մխիթար մեծ գերեզմանն գտնուած է ասրինեբէ ի վեր և վանքի ջրհորին մօտ դրուած իբրեւ աւազան կը ծառայէ։

Հայ մենաստանի մը միջավայրին մէջ «տարաբերու արձանագրութեանց գալով, ինչպէս ուրիշ առթիւ ալ ըսած ենք, բնաւ զարմանալի չենք գտներ այդ պարագայն այնպիսի ժամանակի մը մէջ, յորում հայ դպրութիւնը դեռ չէր ծնած և կամ կը գտնուէր տակաւին իւր խանձարուրին մէջ։

* * *

Սոյն վանքի Ս. Սրբէս անուանակոչութեան վրայ 1873 էն, տաճարի վերաշինութենէն ի վեր՝ նուիրմամբ մէկ մէկ սեղանաց, Ս. Դասդաբէկ և Ս. Դեղբէ անուանքը եւս աւելցան՝ հետեւեալ պատճառներով։

Առաջինն՝ գոհացումն տալու համար ամէն հասակէ ՀԵՐՄԵՌԱՆԴ ուխտաւորներու, որք ամէն եղանակի մէջ միւռ դիւրութիւն չեն ունենար քաղաքիս հիւսիսային պարսպէն դուրս, քիչ մը հեռուն գտնուող Ս. Դասդաբէկ բուն ուխտատեղին — պատմական ՀՐՀՈՐը — երթալու, որ առաւելապէս մշոյզդային ուխտատեղոյ մը պայմաններուն մէջ կը գտնուի իրօք։

Երկրորդին, Ս. Գեղբէ անուանակոչութեան շարժառիթը բացատրելու համար որ ժամանակից տեղական պատմութեան նկատմամբ բոլորովին անկարեւոր չէ, ներուի մեզ քանի մը տող աւելի գրել։

Քաղաքիս հիւսիսային պարսպին հանդիպակացը գտնուած, Դուրս-քաղաք բուսած արուարձանին արեւելակողմը եղած հին գերեզմանատան մը մէջ իրենց ննջեցեալները կը թաղեն ժամանակին հայք և ասորիք, իբրև համերաշխ սեփականատերը։

Որովհետեւ հայք ասկէ զատ գերեզմանատուն ունէին, մինչ նոյն արուարձանի մէջ բնակող 100 տան չափ ասորիք զուրկ կը մնային աղօթատեղիէ, ուստի ասորիք կը թախանձեն հայերը, որ թոյլ տան նոյն գերեզմանատան վրայ կառուցանել եկեղեցի մը։

Հայք՝ իրենց յատկանիշ դարձած ծանօթ մարդասիրութեամբ, արդէն ուրիշ թոյլտուութիւն մը ըրած էին ասորւոց, թողով որ Դուրս-քաղքի ասորիք կիրակիները իրենց ժամերգութիւնը գան Ս. Եփրեմ Խուրի դամբարանին մօտ կատարեն (2)։ Այս անգամ նոյն գերեզմանատան մէջ եկեղեցի մը կառուցանելու թոյլտուութիւնն՝ ալ կ'ընեն ասորւոց, որք ինքնաբերաբար կը խոստանային, յետ այնորիկ, դադրեցնել հայոց բարեսրտութեան շնորհիւ իրենց ցոյն վայր շարունակած երթեւեկութիւնն՝ Եփրեմ Խուրիի քարայրը, Ս. Սարգսի վանքին մէջ։

1844-45 ին կը շինուի ասորւոց եկեղեցին՝ Ս. Գեղբէ անուամբ, որոյ ծախուց գրեթէ ¾ը կելնէ հայոց քսակէն, որք ճշմարիտ անիտարական ոգւով կ'օգնեն ասորւոց այդ կրօնային ձեռնարկութեան, որք ոչ միայն նիւթապէս ազքատիկ վիճակի մէջ էին, այլ և թուապէս յոյժ նուազ կը գտնուէին, ինչպէս ցարդ, բազդատմամբ տեղւոյս հայոց։

Այս կերպիւ, հայք կը կորուսանեն նոյն գերեզմանատան վրայ ունեցած իրենց ընկերովի իրաւունքը. սակայն ասորւոց կողմէ չյարգուիր յառաջադոյն տրուած խոստումը, Եփրեմ Խուրիի քարայրի մասին, ուր յաճախել կը շարունակեն դարձեալ։

Այս միջոցին հայոց ժողովրդեան բարեմիտ մասն, մանաւանդ կանանց սեռը մոռնալով իրենց կրօնային հաստատութիւնները, կը սկսին լիաբուռն ընծայատուութեամբ յաճախել մեծաւ մասամբ հայոց գրամական օգնութեամբ շինուած «Խնդրակատար» Ս. Գեղբէայ եկեղեցին, նուիրագործելու համար կարծես, երկու վարդապետութիւններ, մին ժողովրդական։—«Հեռու սուրբը զօրաւոր կը լինի», եւ միւսը՝ աւետարանական։—«Ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին»։

Այս վիճակ անփոփոխ կը շարունակէ մինչեւ 1872, յորում քաղաքիս հայոց Առաջ։ Ցեղապահ կը դանուէր գործունեայ կղերական մը, Տ. Դաւիթ վրդպ։ Ուշնեցի։

Այս միջոցին, ասորւոց ամենց կողմէ երթեւեկութեան առեն այնպիսի անպատեհութիւնք կը գործուէին վանքին մէջ ի չեռուկս հայոց, որ վանքին ծերունի վանահայր Տ. Եփրեմ վարդապետ (Եդեսացի) այդ հաստատութեան դժնդակ օրերուն մէջ չորարեկ հայցով մնանող պաշտօնեայն, իսպառ անհանդուրժելի արարքներու պատճառաւ քիչ մնացած էր վանքը ձգէր քաղաք դայր։

Այս տխուր կացութիւնը մէկ կողմէն, և վանքի տաճարին վերաշինութեան խնդիրը, զոր տեղական Ազգ։ Վարչութիւնը կը մտադրէր ի դործ դնել, միւս կողմէն՝ հարկադրեցին հայերը՝ նախապէս լուծումն տալ Եփրեմ Խուրիի խնդրոյն։

Հայք՝ վտահ իրենց տեսական իրաւանց արդարութեանը, նուիրագործեալ Օմմ։ մեծազօր Սուլթանայ հրովարտակօք և զանազան պաշտօնագրովք Տ. Դաւիթ վարդապետի պաշտօնավարութեան օրով արդիւնեցին ասորիները Եփրեմ Խուրիի ուխտատեղին ժամերգութիւն կատարելէ։

Ասոր՝ ինչպէս բնական էր, յայտարդեցին բողոքներ ասորւոց կողմէ, ասա և ի Կ։ Պոլիս։ Եւ ըսենք համառօտիւ։ Կայսերական կառավարութեան և Ազգ։ Պատրիարքարանի միջեւ բանակցութեանց նիւթ դառնալէ և տեղական կառավարութեան միջոցաւ կատարուած քննութեամբ անգամ մը եւս հայոց անյեղլի իրաւունքն հաստատուելէ յետոյ՝ վերջացաւ այս խնդիրն որ անցեալն մէջ հայոց մարդասիրական ծանօթ թոյլտուութենէն ծագում առած էր։

Գ. Կ. Ռ.

Եդեսիա, 25 Օգոստ։

(Շարունակելի)

(2) Քաղաքիս ասորիք ժամերգութիւնն միայն ասորական լեզուաւ կը կատարեն։ իրենց ընտանեկան լեզուն հպերէնն է։

ԻՄ ԱՂՋԻԿՍ

Աղջիկ մ'ունիմ որ եօթը տարիէ ի վեր տանջուելու տարեկան է։ Մայրենի լեզուին հաւասար կը խօսի Տաճկ։ Գաղ։ Յունարէն և Անգլիերէն լեզուները, հրեշտակի պէս կերգէ ու սոխակի նման կը գեղգեղէ։ այնչափ վարժ են ձեռքերը նուագածութեան, որ մատուները ստեղնաշարերուն հպեցնելուն պէս, անճառելի վերապացութեամբ մը կը պարուրէ իւր ունկնդիրները։ Կը գծէ, կը նկարէ, կը գեղակերտէ այն ամէն առարկաները որոնք իւր ուշադրութիւնը կը գրաւեն և կը գրէ, կը խօսի, կը ճառէ այնպիսի նիւթերու վրայ, որոց բնաւ իմ խելքս չը հասնիր։ Իւր նուրբ հասակը, բարեձեւ կազմուածքը, հիանալի դիմագիծը, ու թիւրեալ աչքերը կը հիացնեն, կը մոգեն, կ'ըզգխեն այն ամէն Պ. Պ. երիտասարդները որք կը պատուեն զմեզ իրենց թանկագին այցելութեամբը, և որք այնպէս կը հաւատացնեն ինձ որ զաւակիս նմանը ուրիշ ընկերութեանց մէջ փնտռել՝ անկարելին պահանջել է, թէ իրենք Եւրոպայի մէջ իսկ չեն տեսած այսչափ գիտղեալական եւ բարոյական առաւելութեանց աղջկան մը վրայ մարմնացումը, թէ պարզապէս բազդ մ'է ինձ այսպիսի զաւակի մը տիրանալը, որ իւր արտակարգ գեղոյն ու բազմակողմանի հմտութեամբը ամէնուն հիացում կ'ազդէ, թէ անոր հետ խօսելու եւ արտասանած խորհրդաւոր բառերուն նշանակութիւնը հասկնալու համար, ստիպուած են երեքլեզուեան ընդարձակ բառարան մը հետերնին պտըտցնել, թէ վերջապէս աղջկանս արժանիքը՝ մեր ապրած միջնորտէն վեր, անհամեմատ վեր, բարձրագոյն ընկերութեանց սայլներն են միայն, եւ թէ սահմանուած չէ նա մեզի նման հասարակ մահկանացուաց հետ կենակցելու։

* * *

Դժուարին չէ երեւակայել թէ, ո՞րչափ զոհողութիւններ ընելու կը կարօտի մայր մը, այսպիսի աղջիկ մը հասցնելու համար, մանաւանդ ինձ նման որբեւայրի մայր մը՝ որ խիստ կանուխէն զրկուելով ամուսնէնէ, ստիպուած էի մեկ կողմէն անձամբ խնամել, տնտեսել, շահագործել, կառավարել ունեցած դոյն հարստութիւնս եւ միւս կողմէն ալ աղջկանս դաստիարակութեանը հսկել։ Իւր դասատուները, լեզուապետութիւնը, դաշնակը, նկարչութիւնն ու այլ գեղարուեստական ճաշակները աւելի քան 500 ոսկի արժած են ինձ զոր կը վճարեի ամենայն սիրով, նոյն իսկ իմ անձնական պէտքէս ու անհրաժեշտ ծախքերէս խնայելով։ Եւ առաջին անգամ երբ ընկերութեանց մէջ աղջկանս նկատմամբ արտասանուած գովեստները լսեցի, կարծես բոլոր աշխարհ ինձ տուին, եւ ըրած այնչափ զոհողութիւններս ու քաշած տառապանքներս չիզի չափ նշանակութիւն չը կրցան ունենալ աչքիս։

Վարձատրուած էի։

Եւ ա՞յնպիսի թանկագին վարձատրութիւն մը որուն յարգը պարտ էի գիտնալ, որովհետեւ ամէն բերան կը գնահատէր աղջկանս արժանիքը և ոչ ոք յարմար չէր տեսներ մեր ապրած միջավայրին մէջ թոյլ տալու այս հաւատացեալ ծաղկիը։ «Դեսպաններ ընդունելու պատրաստուած աղջիկ մը» կ'ըսէր մին, «Դիւանագիտական խնդրոց վրայ գաղափար յայտնելու կարող գլուխ մը» կ'ըսէր միւսը, «Սալոններու մէջ փոշիսրելու լանջիր» կը մեղադրացիս, «Ինչո՞ւ անձնական կառքի մը մէջ չը փայլի այս գիշուհին» կըսէին հետի քալելը տեսնողներ։ եւ ես լսելով այս ամէնը, օր ըստ օրէ կը քաջալերուէի աղջկանս նկատմամբ տածած խնամքներս և կը ջանայի ամէն կարելի եղած միջոցներով գոհացնել իւր հաճոյքները, որոց մէջ շատ անգամ չկրնար դպչող բաներ ալ չէին պականեր։

* * *

Սակայն դժբաղդաբար մեր տունը յաճախողները ոչ դեսպաններ էին, և ոչ դիւանագէտներ, ոչ պանքերներ էին և ոչ ալ երեւելի անձնաւորութիւններ, այլ հասարակ դասակարգէ երիտասարդներ, որոնց տունը կահաւորեալ սալօն մ'իսկ տեսնել հաղուագէպ էր, ո՞ւր մնաց ճոխ սպաներ, թանկագին զարդեր ու այլ բարձր դասու վերաբերեալ պիտոյքներ։ Եւ ես այս պարագայներուն կը վերագրէի անշուշտ, որ մեզի ծանօթ երիտասարդներէն ոչ ոք չէր համարձակեր աղջկանս ձեռքը խնդրել։ Օր մը—մին այն օրերէն երբ բաղդը ոտքովը տունդ կուգայ՝ ու դուն տպիտութեամբ կը վռնտես զայն—թեզ ու կրակ վճառաւոր մը որ ոչ գաղղիերէն գիտէ և ոչ անգլիերէն, ոչ դաշնակէ կը հասկնայ ու ոչ ալ գեղարուեստի վրայ ճաշակ ունի, վաճառական մը կ'ըսեմ որ տասնըհինգ հազար ոսկի դրամագլուխ ունիմ կ'ըսէ և յետոյ մեր բարեկամները կ'ստուգեն որ բոլոր ունեցածը եօթն ութ հազար ոսկիին մէջը կը իսաղայ և եթէ գժբաղդութեամբ մը ձեռքի ունեցածը կորսնցնէ, նորէն հինգ փարա չկրնար շահիլ։ այո՛ այսպիսի վաճառական մը—ի՞նչ յանդգնութիւն — աղջկանս ձեռքը կ'ուզէ։ Այս ծիծաղելի լուրը լսելնուս պէս, առանց հրաւերի սպասելու բոլոր անկեղծ բարեկամներս կը փութան ի ժողով գումարուիլ մեր տան մէջ։

—Սա անամօթը տես — կ'ըսէ մին— առանց խորհելու որ ծաղրելի պիտի դառնայ՝ կ'ելլայ այսպիսի առաջարկ մը կ'ընէ։

—Դեթ չտկէ չիտակ ստորագրութիւն մը դնել գիտնար, կ'ըսէ միւսը։

—Հայերէն գիտնալն ալ խնդրոյ տակ է։

—Բերնին չափը տալու է այդ լիրբին։

—Դատ քանալու է դէմը։

—Մենամարտի հրաւիրելու է։

—Վա՛յ կիտի տպիտութի՛ւն մա՛յ։ է, ե-բիրդ, դուք ի՞նչ արհամարհական կարծիք ունիք այս մասին։

—Օրիորդը չը զիջանիր այդպիսի արարածներու վրայ խորհիլ։

—Եւ ոչ իսկ անունը բերանն առնել։

—Օրիորդին փափուկ սիրտը մի՛ վիրաւորէք։

Այսպէսով կը վերջանայ առաջին արարուածը և առանց թող տալու որ ես իմ գլխուս քիչ մը խորհիմ, այնպիսի նախատական պատասխան մը կը տանին խեղճ վաճառականին, որ մարդը չէ թէ աղջիկս ուզել, այլ մեր փողոցէն իսկ անցնելու երդում կ'ընէ։

—Քանի մը չաքաթ վերջը կը լսեմ որ յիշեալ վաճառականը կ'ամուսնանայ մեր բարեկամներէն այն երիտասարդին քրոջը հետ, որ աղջիկս կնութեան ուզելուն համար մարդը մենամարտի պիտի հրաւիրէր։ արիւնս գլուխս կը ցասքէ և երբ բացատրութիւն կ'ուզեմ կը պատասխանէ «մեղք որ աղջկանդ ու իմ քրոջս մէջ եղած տարբերութիւնը չես կրնար կշռել, ան ո՞ւր՝ ան ո՞ւր»։

* * *

Երկրորդ խնամին, կոկիկ գործի տէր, բաւական հարուստ, ուսեալ, գեղեցիկ երիտասարդ մ'է։ այս անգամ անցեալէն փորձուելով խնդիրը գաղտնի պահելու չափ խոհեմութիւն կ'ունենամ։ սակայն զո՞ւր ջանք, սատանան ականջնի՞ն կը փսփսայ ի՞նչ կ'ընէ, ո՞ւր են ո՞ւր չեն և ահա իրարու ետեւէ զուռը կը զարնեն։ բարեւ ձեզ։ աստուծոյ բարին քեզ։ մանուածապատ խօսակցութիւններէ վերջ կամաց կամաց խնդրոյն կ'ուգան։

—Պարզապէս պիտի այրէք աղջիկը, տիկի՛ն, այսպիսիներու տալէ վերջ, հո՞՞՞, սպասո՛ւր սպասո՛ւր ոտքդ պագնողին տուր, չեմ գիտեր ի՞նչ պատճառ ունիք այսչափ աճապարելու։

—Ես ալ այնպէս կը խորհիմ։

—Մանաւանդ որ շատ վրան խնայիք բան մ'ալ չէ։

—Այո՛ այնպէս է։

—Դեթ սեղանաւոր ըսածնին ալ մեծ ոսկի մ'ունենար «էլ թաշը էլ գուշու»։

—Ճշմարիտ էք։

—Երիտասարդ մը որ ամբողջ կեանքը ցոյութեամբ անցուցած է։

—Կ'ըսեն թէ երկու հոմանի ունի։

—Եւ թէ ան աս խաբելու ելեր է կարգուելու պատրուակաւ։

—Օր մ'օրանց տունը չը պակիր եղեր։

—Քիթէն բերնէն օղի կը հոտի։

—Մեծելով ծեծելով մայրը գերեզման խօթեց։

—Քայլն ալ ամուսինէն բաժնեց։

—Պարզապէս սրիկայ մ'է։

—Անառակ մը։

—Լիրբ մը։

—Օրիորդը ի՞նչ կը խորհի արդեօք այս մասին։

—Մեր կեցած ժամանակը անոր խօսք չենք։

—Անիկայ տղայ է դեռ։

—Մ'օրը կաթը բերնէն կը հոտի։

—Առաջ Աստուած տեսէք ես անիկա ի՞նչպիսի տեղ պիտի տամ։

Ակ եթէ աստնց ձեռքէն կրնաս ազատել, ազատէ։

Մեր քովի պաշտօնին աւարտելուն պէս կը վազեն ուղղակի երիտասարդին սենեակը։

—Ա. Գ. ստորագրութեամբ 200 ոսկինոց եռամեայ թուղթ մը կայ, զեղչել կարելի՞ է։

—Ինչո՞ւ չէ։ պայմանաւ որ պատիւ ընէք ինձ ծանօթացնել զձեզ։

—Զիս չէ՞ք ճանչնար։ մօտ օրէն պիտի ստիպուիք ճանչնալ ձեր ամուսնութեան առթիւ։

—Ո՞վ է այդ ամուսնացողը։

—Հա՛, դուք չէիք ամուսնացողը։ նեբլեցէ՛ք, այլ սեղանաւոր է։ էֆէնտին։

—Շատ զուարճախօս էք, պարո՛ն։

—Ձեզի պէս փեսի մը քով ո՞վ զուարճախօս չըլլար։

—Շատ աղնիւ էք, պարո՛ն։

—Ձեր նշանածը ազնուագոյն է։

—Սուրճ մը չէ՞ք հրամիր։

—Ջուր մ'ալ միասին։

—Քանի որ պատիւ կ'ընէք իմ ամուսնութեանս խնդրոյն զրաղիլ, ներելի՞ է հարցնել թէ Օր. Ա.ի ազգականներէն էք։

—Աւելի մօտ։

—Հօրեղբա՞յրն էք։

—Ալ աւելի մօտ։

—Բայց օրիորդը ո՛չ հայր ունի և ոչ եղբայր կարծեմ։

—Օր. Ա.ի պատկից գրացին եմ և իրենց ընտանեաց ամենամտերիմը, այնպէս որ առանց իմ հաճութեանս գաւաթ մը ջուր չեն կրնար խմել։

—Ի՞նչպէս կը գտնէք ուրեմն երկուսնէք մեր այս ձեռնարկը։

—Կատարելապէս յարմար։ խնձորին կէսը դուք՝ կէսը դրացիս։

—Այս ամուսնութեամբ երջանիկ ըլլալ կրնա՞մ յուսալ։

—Երջանկագո՞յն ըսէք, պարոն, երջանկագոյն։ աղջիկ մը՝ որ տուգինաներով ուսուցիչներու ճառած է։ որ հինգ լեզու կը խօսի։ որ հաշակաւոր վարպետներէ գեղարուեստ կ'ուսանի։ որ Այվազովսկիին հաւասար կը նկարէ, որոյ գեղեցկութիւնը հաշակ հանած է ամբողջ ընկերութեանց մէջ։

—Ի՞նչ կ'ըսէք, պարոն։

—Դրացիս ըլլալուն համար չէ որ այսպէս կը խօսիմ, այլ բոլոր գինքը տեսնողները կը վկայեն ըսածներուս ճշմարտութեանը։ քանի՛ քանի՛ քսան երեսուն հազար լիրանոց անձինք ուզեցին և օրիորդը չը հաճեցաւ առնել։

—Ինչո՞ւ։

—Որովհետեւ իւր այս ձիրքերը փայլեցնելու համար նախ ճոխ սալոն մը կուզէ։

—Ցետո՞յ։

—Տուգինա մը սպասաւոր։

—Ցետո՞յ։

—Ցետո՞յ երկու տուգինա սպասուհի։ չորս միանձնեաւոր լուացարար։ հինգ արգուկող։ երկու խրուաթ դանապան։ չորս կառք։ տասը ձի։ Պէօյուք-Տէրէ ապարանք մը։ Բերա տուն մը։

—Է՛, հիմա այդ համբաներդ ունի՞։

—Զուտի, սակայն ունենալու բուռն տենչ ունի, ապա թէ ոչ հասարակ արհեստաւորի մը հետ ամուսնանալու համար ի՞նչ հարկ կար տարիներու ընթացքին մէջ ոսկի թափելով այսչափ գիտութիւններ սովրելու։

Ինքներն կրնաք երեւակայել թէ այս գովեստները լսող առեւտրական անձ մը այլ եւս կրնա՞ց համաձակիլ աղջկանս անունը բերանն առնելու։

Ես այս բոլորը տարիներ վերջը կը լսեմ, երբ արդէն բանը բանէն անցած և աղջիկս հռչակուած էր իբրեւ գժուարահամ մը, որ չը զիջանիր հասարակ դասակարգին հետ ամուսնանալ։

* * *

Վերջին զոհողութիւն մը։

Պէշիւք-Տէրէ ենք—որովհետեւ յուսահատած եմ այլ եւս իմ չը զիջանակիս մէջ աղջկանս ամուսին մը գտնալէ—փիացային վրայ իւրաքանչիւր ոք ուշադրութիւնը աղջկանս դարձուցած է։ և բարձր դասու երիտասարդներ առիթ կը փնտռեն մեզ ներկայացուելու, որուն ոչ սակաւ կը փափաքինք մենք ալ։

Օր մը, երկու օր և ահա երիտասարդներու յանդգնագոյնը, վաճառուն գեղեցիկ երիտասարդ մը, գլխարկը ձեռքը մեզ կը դիմաւորէ ամենայն քաղաքավարութեամբ։

—Ներեցէք, տիկին, մենք պատուաւոր մարդիկ ենք, և չենք կրնար համբերել որ այս օրիորդին նման հաղուագիւտ գոհար մը առանց քավալիէի պտըտցնէք, ես Ա... պանքային դեր-տնօրէնն եմ։

Պանքայի տնօրէ՞ն, ո՛հ, Աստուած իմ, տասը տարիէ ի վեր երազած երջանկութեանս կը հասնի՞ արդեօք։ Քիչ մնաց որ կեցած տեղս իյնայի։

Աղջիկս չվոռթութիւնս տեսնելով, գլխու մեղմ շարժումով մը պատասխանեց տնօրէնին։

—Մեծ պատիւ կ'ընէք մեզ պարոն։ մայրս՝ տիկին է։

Իսկոյն պանքերը թեւը տուաւ աղջկանս և սկսանք պտոյտներ ընել փիացային վրայ։

Ցաջորդ գիշեր դեր-տնօրէնին տունն ենք։ հետզհետէ կը ներկայացուէինք պետական անձերու, դեսպանական մարմնոց, դիւանագէտներու, վաճառականներու, սեղանաւորներու, ճարտարպետներու և այլ բազմաթիւ երեւելի անձնաւորութեանց, որոց համար իսկ պատրաստուած էր աղջիկս։ Այլ և այլ դաշնակահարներէ վերջ երբ աղջիկս ամուսկին վրայ նստելով Մօցարտէն կտոր մը ածեց, ամբողջ սալոնը թնդաց կեցցէներու, պրաւօներու, զիթոներու, էլիէներու ազաղակէն և այն երեւելի անձնաւորութիւնները մէկիկ մէկիկ շնորհաւորեցին աղջիկս, որոց ամենուն ալ պատասխանեց իրենց լեզուաւը և ապշեցուց գրեթէ բոլորն ալ։

Ակ այս չափէն վերջ կարծեմ իրաւունք կուտաք ինձ քիչ մ'երջանկութիւն երազելու զոր մեր դուռն եկած հասած կը կարծէի արդէն։ որովհետեւ ընկերութեանց մէջ ձեռքէ ձեռք կը խլէին աղջիկս և պարելու համար տանուհինդ օր առաջուց «անկաժէ» կ'ընէին, և միթէ այսչափ հիացումները, աքաջացումները, գնահատումները ապարդիւ՞ն պիտի մնային։ այսօր չէ, վաղը պիտի հնչէր այն բերկրալից ժամը, յորում պիտի առաջարկուէր իրեն ընտրութիւն մը ընել պանքերի մը ու դիւանագէտի մը միջեւ։

Սակայն օրերը կ'անցնէին և հակառակ քաջած սրտմաշուքիս, բան մը չէր արտասանուեր որ ամուսնանալու նշանակութիւն ունենար։ ի՞նչ, դարձեա՞լ յուսախաբութիւն, հապա ըրած ծախքե՞րս, հապա նախկին դրացեայ մեզ նկատմամբ ընելիք զրպարտութիւնն՝ ը։ սակայն իրողութիւնը ճշդիւ էր և ամէն մարդ վար կ'իջնար Բերա՝ դարձեալ տեսնուելու ժամերութեամբ։ մեսս բարուվեր կ'ուգես, ատիս՞ներ կ'ուգես, ձեռքի սեղմումնե՞ր, քօքիմմնե՞ր։—երթա՞ք բարով, եթէ զաւակս ամուսնացնելու տարտամ յոյս մ'ունէի, ան ալ դուք առիք միասին տարիք։

Այս բաներուն պատճառաւ հիմակ անծանօթ անկիւն մը քաշուած մայր ու աղջիկ, երբեմն երբեմն խլավուններու այցելութիւնը կ'ընդունինք որք կը պախարակեն զմեզ այնչափ ոսկին կրթութեան առջեւ վայրապար վատնելնուս համար, և կը հաւատան որ եթէ հիմա 500 ոսկի ունենայինք՝ չնորհքով փեսայ մը կրնայինք առնել։ բայց որովհետեւ ալ ստակիս չը մնաց, «պարէ՛ տասնըութը տարու է» ըսէ կ'ըսեն։ և ես եօթը տարիէ ի վեր «տասնը եօթը լմնցուց տասնըութին մտաւ» կը կրկնեմ, առանց օգուտ մը քաղելու։

* * *

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Կինը։—Հէրման, սիրելիս, անպատճառ պէտք է տաք ջուրերը երթամ, հետզհետէ կը գիշնամ ու կը ծանրանամ։ Անցեալ օր կշռուեցայ, և երեւակայէ որ 160 քաշ եկայ։

Ամուսինը (որ ածուխի վաճառական է)։—Ո՞ւր կշռուեցար։

Կինը։—Ածուխի մթերանոցին մէջ, քու կշռովդ։

Ամուսինը։—Օ՛հ, մի՛ վախնար, ճիշդ կէսը կը կշռես։

* *

Սպասուհին (կէս գիշերուան պահուն)։—Ելիր, պարո՛ն, ելիր, վարը գող կայ։

Պարոնը (վերմակը գլուխը քաշելով)։—Հոս չէ, ըսէ։

* *

Ճաշարանի մը մէջ։

Պարոն մը։—Բի՛ւֆ, ի՞նչ գէշ կը հոտի այս ձուկը։

Սպասաւորը։—Շատ դժուարահաճ էք, պարո՛ն։ Այս ձուկը երեք շաբաթ առաջ տեղի ունեցած Ուտելարանական ցուցահանդիսին մէջ առաջին մրցանակ չահեցաւ։

Տ. Ս. Մ.

ԱԶԴ.—Երիտասարդ մը որ Գաղղիերէն, Հայերէն և Տաճկերէն լեզուներն և առեւտրական փորձառութիւն ստացած է չորս տարիի չափ ի Ֆրանսա, կը փափաքի վաճառականի մը քով պաշտօն վարել։ Պատրաստ է լաւ տեղեկութիւնք հաղորդել իր վրայ։ Փափաքողը կրնայ խմբագրատուն դիմել։ 231 1—3

ԱԾՈՒ ԳՐԵԱՆՔ

Պատիւ ունիմ ծանուցանել Արգոյ հասարակութեան և ի մասնաւորի Պատ. յաճախորդացս թէ, մեծանուն հեղինակ Ա. Մ. Գարագաշեան էֆէնտիի, հետեւեալ երկասիրութիւնքն, զոր մինչեւ ցարգ ես կը ապէի և կը վաճառէի, այժմ Հեղինակին և մեր հաճութեամբ յանձնած ենք այդ տպագրութեանց և վաճառման իրաւունքը, նախկին փարձ և հաստատիմ աշակերտիս և այժմ յաջողդիս, գրավաճառ-տպագրի, և կրտմարար Միհրան էֆէնտի Փափազեանի որոյ կեդրոնատեղին է, Զաքամգճիրար, Զիւմպիլլի խանի մէջ, վարի յարկիս 18, 19, 21։

Աշխարհագրութիւն Բնական պատկերազդ։	2	20
Լուսամնական	4	
Գաղաքական	4	
Գաղաքական և Բնկ.	6	
Գաղ. Բնկ. Լուսամ.	10	
Ընթերցարան կամ Աբսենակ պատկերազդ։	2	
Հաստոցիկ քարտէզ ի Նոխնեաց	8	
Դամասկոսի կամ Փարիզի քարտէզ	3	
Պատմութիւն Հայոց	3	
Սրբազան պատմութիւն	4	
Սկզբունք Քերականութեան		
Քերականութիւն Լոյսնական	1	
Դպրութիւն	6	

Հեղարան 100ը 15 զրուշ
Քերական „ 6 „
„ Պատկերազդ։ 10 „
Համառօտ Քերականութիւն 60 փարայ
Աշխարհաբար Քերականութիւն 100 փարայ
Ընդ մամլոյ Ա. և Գ. Ընթերցարան։

Հետեւարար կը հրաւիրեմ իմ ազնիւ յաճախորդներս որ, երբ վերոյիշեալ գրքերէն պէտք մի ունենան

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԼՆԴԻԷՄ ՀԻՄՆԵԱԼ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգլ. Ոսկի 1,000,000

«ՓԻՆԻՔՍ»

Հիմնեալ է Լ.նդոնի մէջ 1782 թուին

ՓԻՆԻՔՍ, հիմնեալ առաւելքան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետէրերը Անգղիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՓԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18,000,000 Անգղ. ոսկւոյ գումարն որ յարդ վճարած է հրդեհի ցնցուցց համար։

34

ՓԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի՝ կալ ուածք, կարասիք և ապրանք յոյժ նպաստաւոր պայմանօք և մինչորդութեամբ ստորագրելոյս, որք ունիւք լիազօր խլանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍՈՒԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եկերաց Թիւ 11։ և 12, Սանտալէը խան, Գալաթիա, Աւստրիական Թղթատան վերեւ։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԳ եւ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

Ա. ԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	Ֆռանք 8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1890	» 6,165,860
Տարեկան հասոյթ » » »	» 14,135,925

Ընկերութիւնս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և ընակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ—Գաբու, Անանիատիս խան 12, 13, 14

ՖՈՒԱՆՔՖՈՐԹՈՒԱՋ

ԾՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ ֆռանք 6,250,000 Պահեստի դրամ ֆռանք 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և գրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Սոյն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկ. Փինիքս միացած է եւրոպական 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամ գումարն պահեստի դրամն է Ամբողջ քան 100,000,000 ֆռանք

Լիազօր ներկայացուցիչ համար Թուրքիոյ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ եւ ՀԱՆՐԱՑԻՆ ՊԱՀԱՏԵԳԻ ԿԱՐԱՍԵԱՑ ՀԻՄՆԵԱԼ ԷՕԺԷՆ ԴԱՐԱԲԵՐ ՊԷՅԻ ԿՈՂՄԷ

Բերա, Սաքզ Աղա փողոց Թիւ 21, Լիւքսէնպուրկի բաղանեաց մօտ
Կալաթա, Վօյվոտա փողոց, Կիւմիւշլիւ խան, Ֆրանսական նամակատան դէմը

Սակ մի կիսամեայ գրատարացմամբ միանգամի պարտք

Եթէ ունիս է նիւթ մը ունիք վաճառելու հանրային աճուրդով կամ սակարկութեամբ.	
Եթէ կուզիք օգտուիլ լաւ առիթներէ.	
Եթէ պէտք ունիք ծախու նիւթերու վրայ կանխավճարներու.	
Եթէ կուզիք ամենայն ապահովութեամբ առանդնել կարասիներ, արկղներ, ծրարներ, դասակներ, պատկերներ, կառքեր, արծաթեղէնք եւ ապրանքներ.	
Եթէ ունիք ծրարներ, արագրումներ, մաքսի հանելիք ապրանքներ.	
Եթէ կուզիք ծախել կամ գնել անշարժ կալուածներ.	
Եթէ կուզիք վարձու տալ ձեր տունները կամ յարկերը.	
Եթէ կուզիք տուներ կամ յարկեր վարձել.	
Եթէ կուզիք օգտակարապես մատակարարել ձեր անշարժ կալուածները.	
Եթէ կուզիք ապահովագրել ձեր շարժուն և անշարժ կալուածները լաւ պայմաններով.	
Դիմեցէ՛ք վերոյիշեալ վաճառատունն	
Տանօք.— Վաճառատան կանոնագիրը հասարակութեան տրամադրութեան տակն է։ 227	

Խնայեցէք դրամ

COMP RUSSE

DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ եւ ԱՌԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբաթուան երթեւեկութիւնք

Բշ. 14 26 Օրեսայի ուղղութեամբ, ժամ 2ին յետ միջօրէի։

Գշ. 1 27 Ալեքսանդրիոյ ուղղակի ուղղութեամբ, ժամ 5ին յետ միջօրէի. Պիրէասի համար,

Դշ. 16, 8 Սեվաստոպոլի ուղղութեամբ, առաւօտեան ժամ 10ին։

Դշ. 16/28 Նուրհանգակ դէպի Փոքր Ասիոյ Նուսա հանգիստները մինչեւ պաթում առաւօտեան ժամը 11ին։

Ե.շ. 17 29 Սեւեսայի ուղղութեամբ, ժամ 2ին յետ միջօրէի։

Ազդ.—Սեպտ. 96/23, երեքշաբթի օրը կ դալեն գեղի Սուրիոյ նաւահանգիստները մեկնող ու, պեւոքը Զմիւռնիոյ մէջ պիտի հանգիստն թրիքալիլ Պէյրութ, Եաֆա, և Բոր-Սայիտ գացող շոգենաւերն։ 12

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒ

Եբրեա-Ամէրիկ, Կ. Պոլսոյ և Օրենսայի գծի

ԹՈՄԱՍՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՊՔԷՆԿ

Առնուած	Թնոյ	Առնուած	Թնոյ	Առնուած	Թնոյ
Աղպանս	2000	Ֆլամինկո	1600	Բալէրմոն	3200
Անճելս	8000	Կալիլէս	5500	Բանտեր	1700
Աւսոլոս	5500	Կիդանս	2200	Բրայտ	1500
Արկս	2300	Կոլզ	1800	Բոլզ	1000
Արիոսդ	3000	Կրօնոս	2200	Գուիդ	2800
Գասանս	3000	Լիրս	2000	Դիալիթ	4400
Գոլոսինս	2200	Լիտուլկս	3800	Դիանլգ	3200
Գրանվ	2000	Լինոսս	7000	Թոլլս	3000
Գլենֆալս	3800	Լումպեր	1200	Ռամնս	3500
Գեւլրս	2600	Լայսկս	5000	Ռոզարիս	3500
Գոլիբաս	2500	Մինես	2300	Պալերմս	4000
Գամնս	2100	Թելլս	2000	Սանդիակս	8200
Գագս	2000	Թոլբինս	4200	Սաբնս	2000
Գոսն	2700	Թոմլնս	2200	Սիրիս	2000
Զէբակս	5000	Լէս	2000	Տրենտոս	4300
Դլիս	5000	Լէքանթ	4500	Թ. Ուիլլրն	3000
Գոլրլոս	3400	Լիվրնս	3000	Թուրս	1200
Տիգս	2500	Մարս	1500	Փոլիս	2800
Տօմիս	2500	Մարինկս	4300	Փորքիս	900
Տուրս	4800	Մարգէլլս	6500	Ռոբրինս	5000
Տրաթ	2100	Միլս	2000	Վոլթուրնս	5000
Իսլնսան	2600	Մուրիս	3100	Եէս	3600
Իլսորտոս	3000	Նէրս	2000	Զէպրա	1000
Էլէքթրս	3200	Օրլանս	3000	Տիթանչրս	200
Էրաթս	2600	Օթելլս	5000	Ճիզոս	200
Ֆալրան	800	Ոգրանս	4500	Զէրս	140
Ֆեմս	700	Ոգրս	2000	Փոքրիթ	120
Էմիրլզ Մոնարք					8000
Բիթրիզ Մոնարք					8000
Լէգիլզ Մոնարք					8100

Ուղեւորներու համար ամէն գեղեցիկ կ'ընտրուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ եւ ՈՒԻԼՏ
Գրաբնակք
Թիւ 17-18, Ռիչիւք Մէյլէթ
40 խան, Գալաթիա

Արտօնատէր Ս ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌՆԻԼԷ ԼՐԱԳԻՐ

OREZZA

Հանգստիչ ջուր երկաթախառն բրուտոնով, ամենէն հարուստ երկաթի եւ ասիս խառնուրդի մասին։

ԱՅՍ ՋՈՒՐ ՄԲՑԱԿԻՑ ՁՈՒՆԻ

ՍՏԱՄՈՔՍԱՑԱՒԵՐՈՒՆ—ՏԵՆԴԵՐՈՒՆ—ՔԼՈՐՈՁԻ—ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆՑ եւ ԱՐԵԱՆ ՆՈՒԱՁՈՒԹԵՆԷ

ՑԱՌԱՋ ԿԱՌՆ ԱՄՆՆ ՏԵՍԱԿ ՀԻՒԱՆԴԻՈՒԹԵԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ

EMULSION SCOTT

(ՍԿՈՏԻ ՕՀԵՐԵԿ)

ԺՈՐԻՒ ՁԿԸՆ ՕՈՒՏ ԻՒՂ

Իւղաձիգ ոչ շաղ և ապոյով

Գաղտնաբար մեռնող ՍԿՈՏԻ և ՀՈՐՈՒՆԻ ի նեւ-Եորք։

Կաթին չափ ախորժահամ է

Մարիւ ձկան հում իւղի բոլոր յատկութիւններն զուտ, հրաշագործիչներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոշլերը
Կը բուժէ հաղը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճոգածութիւնը

Բժիշկներուն ընդունուած է, ախորժահամ ու հեշտ ունի, գիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն.

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Գործակատարք ի Կ. Պոլիս, ՀԱՄԱՐՆԻ եւ ՀԻՐԵԱԼ

Լ'ԷՔՈՆՕՄԻ ԷՆԹԷՐՆԱՍԻՕՆԱԼ

L'ECONOMIE INTERNATIONALE

ԹՆԱՑՈՂՈՒԹԻՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ապահովագրական փոխադարձ ընկերութիւն վասն վերապահմութեան դրամագլխոյ

Հաստատեալ Գաղղիոյ Հանրապետութեան 1868 յունվար 22 հրամանագրոյն համեմատ

ԿԸ ԳՈՐԾԷ ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ԳԱՂՂԻՈՅ ՏԵՐՈՒԹԵԱՆ

Ամէն ոք գիտէ խնայողութեան կարեւորութիւնը, բայց շատ անգամ դժնեանալով մեր խնայած և աւելցուցած ստակներն ընդունող յատուկ հաստատութիւններ կը կորսնցնենք դրամագլուխ մը կազմելու առիթն և հապար ու մէկ պատճառներ գտնելով՝ մեր խնայածստակներն յուսմէջտս կորսնենք։

Փոքր գումարներով դրամագլուխ մը կազմէն ալ դժուարին և գրեթէ անկարելի է, եթէ այսպիսի ընկերութեան մը հետ մասնաւոր կապակցութիւն մի չունենանք։

Ահաւասիկ «Լ'Էքոնոմի էնթէրնասիոնալ» ընկերութիւն որուն փոքր դրամարներ, այսինքն ամիսը հինգ, տասը և այն վճարելով, ապագային մեր ձեռքը կ'ունենանք հաւեստ դրամագլուխ մը։

ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԻՆԵՐ 265

Աւելի մանրամասն տեղեկութիւն ուզող և բաժանորդագրուիլ փափաքողները կը հաւաքուին դիմել ի Սիրքէճի, հանրային պարտուց պաշտօնական դիմացը, Կիւլպէնկեան խան, Թիւ 26-27։ ընդհանուր տնօրէն Բ. ՇԷՀԻՐԼԵԱՆԻ կամ ընդհանուր քննիչ ԱՆԻՖՏՈՍ ԱՀԱՐՕՆԵԱՆԻ։

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Ոչ ամիսը երկու անգամ կը քանին Լիվերբուլ և Արեւ-Լեռնի միջեւ

Առնուած	Թնոյ	Առնուած	Թնոյ
Ամերիկա	7718	Գասպիանիա	4845
Եդրուրիա	7715	Պոթնիա	4531
Իբերիա	7391	Սամարիա	3574
Ուրանիա	7269	Մարաթոն	2403
Լավանիա	5587	Ադրիա	2393
Ութիանիա	5517	Սարակոսա	2166
Կալիա	4809	Թարիֆա	2246
Սիթիա	4557	Բալմիրա	2144
Ալէբբօ	2,43	Թրինիտատ	899
Գեսար	1876	Մերոգգօ	1855
Հերպոլրկ	1614		

Դիմել առ ԹՈՄԱՍ Զ. ՃՈԼԻ գործակալ
Thomas C. Joly
Ալիքսանդրիա խան, Թիւ 11
17 Գալատիա

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվերբուլ և Մէնչեսթրի գլխաւոր բանդ ղրկելու

Առնուած	Թնոյ	Առնուած	Թնոյ
Քանդրս	4200	Պիրմ	3000
Ֆերս	4000	Ոսպրիս	3000
Օսմանլի	4000	Նեբրիս	3000
Սեսոստրիս	3250	Բերս	3000
Թրոյ	3250	Լոգիս	800
Մակեդոնիա	3250	Օլիմպ	800
Մարիսթիս	3250	Սեսիլ	700

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և ԸՆԿ.
Ուիթոլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
31, Ճէյմս Սթրիդ Լիվրբուլ

ՌՈԵԱԼ ԷՔՍՉԷՆՃ

ԱՍԻԻՈՒԱՆՍ ՔՈՒԲՈՐԷՆԸ

ԱՄԵՆԷ ՀԻՆ եւ ԱՄԵՆԷ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720ԻՆ

Դրամագլուխ աւելի քան Անգլ. ոսկի 4,000,000
Ցարդ հրդեհի արկածից համար տուած է » 35,000,000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամեն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

Վճարմունք ամենայն կանոնաւորութեամբ և մանաւանդ առանց որ եւ իցէ ձեղջի կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ եւ ԸՆԿ.
140 Պահչէ Գաբու, Մէյ յանանքը ասքաք, Ուիթալ խան։

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ եւ ՄԱՐՈՒԵԱՆ

Ն. ԲԱՓԷ եւ ԸՆԿ.

Մարսիլիան և Պոլսոյ գծեր կանոնաւորապէս

Սամսոն, Տրապիզոն և Պաթում երթալիք յառաջիկայ շոգենաւն է Անդրի որ սեպտ. 14ին Մարսիլիայէն և սեպտ. 23ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Մէրէսսի

Բարիզ Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնելով,

Ա. կարգ 245 ֆրանք
Բ. » 175 »

Ուղեւորներ և ապրանք ստանալու

Նաւագնեաց, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատար ԹԻՄՈԹԷ ԲԸՂՍԻԼ
Մուսանեէ Սիրէ Ֆրանք
5

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱԹՈՒՂԻՔ Ճ ԱՆԱՊԱՐՀՈՐԴԱՑ

ԳԻՒ. Կ. ՊՈԼԻՍ—ԱԴՐԻԱՆՈՊՈԼԻՍ—ՊԼԼՈՎԱ

Արեւ. Ճեղջ. Թ. 2 Բշ. Եր. Ա.	Կանխ. Ճամբ. Թ. 4 Ա.մ. օր Ա	Կանխ. Խառն Թ. 62 Ա.մ. օր Ա	Կանխ. Խառն Թ. 132 Բշ. Եր. Ա	Կանխ. Խառն Թ. 124 Բշ. Եր. Ա	ԿԱՅԱՐԱՆՔ	Կանխ. Խառն Թ. 123 Բշ. Եր. Ա	Կանխ. Խառն Թ. 131 Ա.մ. օր Ա	Կանխ. Խառն Թ. 61 Ա.մ. օր Ա	Կանխ. Ճամբ. Թ. 7 Ա.մ. օր Ա	Արեւ. Ճեղջ. Թ. 5 Բշ. Եր. Ա
ժ. Ր.	ժ. Ր.	ժ. Ր.	ժ. Ր.	ժ. Ր.		ժ. Ր.	ժ. Ր.	ժ. Ր.	ժ. Ր.	ժ. Ր.
7 20	8 16	6 30			Մէ. Կ. ՊՈԼԻՍ ..... ժմ.			8 32	8 22	4 00
		6 41			Գալատա-գաբու			8 23		
		6 53			Եէնի-գիւլ			8 07		
		7 12			Մաչրիգիւղ			7 44		
		7 26			Ալիբէյնտա			7 22		
		7 45			Գիւլիւք — Զէքմէճէ ...			7 07		
		8 29			Կարթալ—գիւլ			6 22		
	9 35	9 05			Հասրուվէղ			5 56	6 58	
		9 49			Զանտաճա			4 53	6 17	1 50
9 58	10 41	10 25			Գասպաքճէ			4 20		
		11 27			Ամէլլի			3 29		
	12 12	12 09		ժմ.	Զէյրեքչէյ ժամնամ			2 37	4 38	12 09
	12 14	12 40		մկ.	Զէյրեքչէյ ժամնամ			2 12	4 22	12 04
12 04	12 56	1 41			Զարլու			1 26	3 56	
		2 38			Մուրատլը — Գեօրքէլի			12 26		
		3 05			Մէքտէր—Զէֆթիլիք ...			11 53		
	2 28	3 44			Լիւլէ—Պուրկազ			11 16	2 26	
2 04	2 55	4 30			Պազարճըք—Էսքի			10 39	2 00	9 33
		5 13			Բասլը—գէչ			9 40		
	3 58	6 05			Ուզունճա—Գեօքչրիլ			8 56	12 30	
	4 16	6 47			Գուլէլի—Պուրկազ			7 46	12 31	8 09
		7 12			Ռուրլի			7 14		
	7 39	7 39		ժմ.	ԱԳՐ. ՊՈԼԻՍ ..... մկ.			6 25		
4 21	5 09			մկ.	Գասրքէյ ..... ժմ.		1 25		11 37	7 14
4 39	5 12		3 15				12 32		11 22	7 09
			4 07				11 39			
5 26	6 12		4 57	ժմ.	Մուսթաֆա բաշա մկ.		11 19		10 27	6 12
5 31	6 32		5 17	մկ.	ժմ.		9 54		10 02	6 07
6 14	7 13		6 38	ժմ.	Հարամիդ մկ.		8 48		9 19	5 23
6 20	7 38		6 58	մկ.	ժմ.		8 01		8 59	5 13
	8 01		7 38	ժմ.	Թրքոսլու-Սէմէրի մկ.				8 38	4 53
	8 11			մկ.	ժմ.	12 50			8 23	4 48
	8 47		10 50		Գոյանճըք—Հասքէյ ...	12 06			7 32	
	9 34		11 50		Եէնիի—Մահմուլէ	10 50			7 03	
	9 59		1 07		Բաքալլը	9 58			6 39	3 06
8 38	10 25		1 49		Գաթալճեզ—Պիզանիմա.	9 04			6 14	
	10 41		2 24	ժմ.	մկ.	8 25			5 54	2 17
9 23	11 04		2 49	մկ.	Փիլիպե ժմ.	7 51			5 34	2 12
9 33	11 58		3 20		Թաթար բազարճըք մկ.	6 45			4 48	
	12 22		4 41	ժմ.	Ալարամպէյ մկ.	6 00			4 17	
	12 26		5 12	մկ.	ժմ.				4 16	
11 10	12 44			ժմ.	Պէյլրպա մկ				4 01	12 14
3 20	4 29				Սոֆիա				12 34	15
3 40	9 50				Նիշ				5 51	9 20
8 43	4 48				Պէլգրատ				10 53	50
9 40	1 20				Պուտապէշթ				2 40	57
3 16	7 20				Վիէննա մկ				8 30	5 30

ԳԻՒ. ՍԵԼԱՆԻԿ—ԻՒՍԹԻԹԻՒ—ՍԿԻՏՋԷ

Կանխ. Խառն Թ. 512 Ա.մ. օր Ա	Կանխ. Խառն Թ. 522 Ա.մ. օր Ա	ԿԱՅԱՐԱՆՔ	Կանխ. Խառն Թ. 521 Ա.մ. օր Ա	Կանխ. Խառն Թ. 523 Ա.մ. օր Ա
5 10				
5 44		Սելանիկ (Պիւ.ֆէ) ... ժմ.		10 11
6 21		Թեսալոնիկ ..... մկ		9 11
6 48		Ամանթոլիս		9 01
6 53		Գարասուլու		8 11
7 31		Կիւմիւճէք		8 11
8 05		Կեօրկէրլի		7 53
8 15		Մոռլուք		7 13
8 47		Մոմուճիչա		7 00
8 57		Տէմիրճաբա (Պիւ.ֆէ) ժմ.		6 32
9 42		մկ.		6 17
10 21		Քրիմոլաչ		5 48
11 08		Վէնիդ—կրաչչօ		5 00
11 18		Քեօրքիւլիւ ..... ժմ.		4 10
12 06		մկ.		4 00
12 42		Զէյլէնիչաս		3 17
	1 06	ԻՒՍԹԻԹԻԷ (Պիւ.ֆէ) ժամ.		2 41
	1 47	մկ.	8 20	
	2 42	Ամասլար	7 44	
	3 15	Գումանովա	1 07	
	3 43	Թարգանոշիլէ	12 29	
	3 56	Բրէշօվա	12 04	
	4 21	Պուգաչուվէլէ	11 46	
	4 34	Պոլիէնեվէլէ	11 16	
		Զիկոլէնիչէ	11 00	
9 38		Նիշ	5 31	
4 48		Պէլիգրատ	10 33	
1 20		Պուտապէշթ	2 40	
20		Վիէննա մկ	8 30	

ԳԻՒ ԻՒՍԿԻԿՈ—ՄԻԹՐՕՎԻՑԱ

Կանխ. Խառն Թ. 622 Բշ. Եր. Ա.	ԿԱՅԱՐԱՆՔ	Կանխ. Խառն Թ. 621 Բշ. Եր. Ա.
7 15	Իւսքիւդ (Պիւ.ֆէ) ժամ	12 20
8 22	Էյէշան ..... մկ	11 36
9 17	Գաչանիք	10 59
10 27	Վ. Էուիզովից	10 13
11 20	Լիբրիան	9 11
12 12	Բրիչիթիա	8 16
12 58	Վուչիթրն	7 22
1 15	Միթրովիցա մկ.	7 00

ԹԷՐՆՕՎԱ—ՍԷՄԷՆԼԻ—ԵԱՄՊՕԼՈՒ

Կանխ. Խառն Թ. 321 Բշ. Եր. Ա	Կանխ. Խառն Թ. 323 Բ.մ. Գ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կանխ. Խառն Թ. 322 Բշ. Եր. Ա	Կանխ. Խառն Թ. 324 Բշ. Եր. Գ
9 45	1 40	մկ. Թրնով-Սէմէնլի ժմ.	7 20	9 49
9 58	2 25	Գարաբունար	6 46	9 16
11 03	3 32	Լոնոլ—Մէհլէսի	5 48	8 14
12 13	4 43	Լիլեն—Զարբա	4 42	7 09
1 11	5 41	Սիրիա—Գրամնիլը	3 41	6 13
2 00	6 30	Իսմայլիա ժմ.	2 10	5 12
6 58		ժմ. Պուրկազ մկ.	9 10	

ԱԴՐԻԱՆՈՊՈԼԻՍ—ՏԷՏԷ ԱԼԱՃ

Կանխ. Խառն Թ. 221 Բշ. Եր. Ա. Գ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կանխ. Խառն Թ. 222 Բշ. Եր. Ա. Գ
7 51	մկ. Ա. Պոլիս ..... ժամ.	6 35
8 47	Ռուլի	5 58
9 33	Գուբլեի — Պուրկազ ...	5 30
10 10	Տիմէթոքա	4 38
11 22	Սուֆլի	3 31
12 20	Պիտկլի	2 31
1 21	Ֆերրէ	1 29
2 22	ժմ. Տեսկ—Ալբ ..... մկ	12 20

1. Ստորագրեալ վայրկեանները կը ցուցնեն երթեւեկման ժամը 6ին և առաւօտեան ժամը 5.59ի միջեւ եղած դիշերուան ժամանակը։

2.—Կ. Պոլսոյ ուրուարձանաց ժամանակացոյցը մասնաւոր ցուցակ մը է եղած։

3.—Զանակողմի սիւնակաց մէջ կառնախմբոց մեկնման ժամանակը պէտք է կարդալ վերէն վար, և ազակողմի սիւնակաց մէջ վարէն վերս

4.—Թիւ. 321 վագոն կառնախմբոյն ի Թրնովա—Սէմէնլի կը հաղորդակցի 7 Թիւ. ցպայմանագրական կառնախմբին։ հետ։

5.—Թիւ 322 վագոն կառնախմբոյն ի Թրնովա—Սէմէնլի կը հաղորդակցի Թիւ 4 ցպայմանագրական կառնախմբին և Թիւ 131 վագոն կառնախմբին հետ։

6.—Թիւ. 621 խառն կառնախմբոյը Սկիտպի մէջ կը հաղորդակցի՝ Զիպէնիչ դացող Թիւ 522 եւ Սելանիկ գացող Թիւ 513 խառն կառնախմբոց հետ։

7.—Մաշնաբարձ վագոն մը աւելցուած է Թիւ 7 և 4 պայմանագրական կառնախմբոց, արեւելեան ճեպարթացին չբանած օրերն, այսինքն.

Կ. Պոլսէն մեկնող Թիւ 4 կառնախմբին) Կիրակի, երեքշաբթի, չորեքշաբթի ուրբաթ և շաբաթ
Պէյոգլուէն մեկնող Թիւ 7 կառնախմբին) օրերը

Ուղեւորք կրնան զայնս ի կիր առնուլ յաւելուածական տակ մը վճարելով։

Ա. կարգ Բ. կարգ
Ֆր. 10.— Ֆր. 7.— Կ. Պոլսէն Ադր. Պոլսոյ համար կամ փոխադարձաբար
» 12.— » 9.— Կ. Պոլսէն Փիլիպէ Պէլլոպոյի համար կամ փոխադարձաբար

8.—Արեւելեան Եւրոպայի ժամանակը [Ա. Ե. Ժ.] 4 վայրկեան առաջ է Կ. Պոլսոյ տեղական ժամուն վրայ։

9.—Մէյնի Եւրոպայի ժամանակը [Մ. Ե. Ժ.] 32 վայրկեան ետք է Սելանիկի ժամուն վրայ։

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ